

**ՂԱՐԱԲԱՂԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
 ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՕ  
 ՍԱՀԱԿԵԱՆ ԼՈՍ  
 ԱՆՃԵԼՈՍԻ ՍԷՉ**

## «ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ ԵՒ ՌՈՒԲԵՐԴ ՔՈԶԱՐԵԱՆԻՆ ՁԵՐ ԿԶԻՆ ՓԱԹԱԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵՑ ԺՈՂՈՎՈՐԴԷՆ



Լեոնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյան

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյան, քանի մը օր առաջ քաղաքս ժամանեց իր գլխավորած պատուիրակության անդամներուն հետ:

Ուրբաթ, Նոյեմբեր 16-ին, Պէ-վըրլի Հիլզի «Ֆոր Սիդնի» պանդոկին մէջ Տէր եւ Տիկ. Վահէ Կարապետեան, բարի գալուստի ընդունելութիւն մը սարքած էին ի պատիւ հայրենի հիւրերուն:

Սոցն ընդունելութեան ընթացքին ողջոյնի խօսքերով հանդէս եկան օրուան հիւրընկալ Վահէ Կարապետեան, Հայաստան Համահայկական Հիմնադրամի տեղական վարչութեան ատենապետուհի Մար-

Շաբ.ը էջ 4

Ուրբաթ, Նոյեմբեր 16-ին Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ տեղի ունեցած հանրահաւաքի մը ընթացքին ՀՀ առաջին նախագահ եւ այժմ թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեան հետեւելով վարչապետ եւ թեկնածու Սերժ Սարգսեանի կողին, ներողութիւն խնդրեց հայ ժողովրդէն՝ «Սերժ Սարգսեանին եւ Ռոբերդ Քոչարեանին ձեր վզին փաթաթելու համար»: Այս խօսքերը տաննակ հազարաւոր ժողովուրդի կողմէ ընդունուեցան բուն ու որոտընդոտ ծափահարութիւններով:

Տէր-Պետրոսեան խոստովանեցաւ, որ իր կատարած ամենամեծ սխալը եղած է այդ անձիքը Ղարաբաղէն բերելը եւ հայ ժողովուրդի «վզին փաթեթելը»: Ապա, Տէր-Պետրոսեան խնդրեց ժողովուրդի օգնութիւնը՝ «Օգնէք ինձ՝ ուղղելու իմ սխալը»:

Այդ սխալն ուղղելու համար Տէր-Պետրոսեան կարեւոր նկատեց նաեւ ընդդիմութեան համախմբումը: Ան յայտարարեց, որ բոլոր կուսակցութիւններու ղեկավարներուն, որոնց հետ ինք հանդիպած է, տեղեկացուցած է, որ իր խնդիրը ոչ թէ նախագահ դառնալն է, այլ ազատուիլը գործող հակապետական իշխանութիւններէն:

Ելուցի ընթացքին Տէր-Պետրոսեան յայտնեց, որ իր պաշտօնը ուղղուած չէ միւս թեկնածուներուն դէմ, իր թիրախը իշխանական թեկնածուն է, եւ որպէս փոխդիմումային տարբերակ կոչ



Բազմահազար ժողովուրդ կը հետեւի հանրահաւաքին

ըրաւ նախագահի միւս թեկնածուներուն միաւորուելի համագային այդ շարժումին, եւ եթէ այդ միաւորումը կայանայ, ինք նախագահի պաշտօնը կը վարէ միայն 3 տարի, որմէ ետք ինք հրաժարական կու տայ եւ տեղի կ'ունենայ ազատ ու արդար նախագահական ընտրութիւններ:

«Քաղաքական ուժերի հետ իմ ունեցած բոլոր հանդիպումներում որեւէ սակարկութեան չեմ գնացել: Պարզապէս շարադրել եմ իմ տեսակէտները ներկայ իրավիճակից դուրս գալու անհրաժեշտութեան եւ քոչարեանական ռե-

Շաբ.ը էջ 5

## ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏԵԱՆԻ ՎՐԱՅ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԾՐԱԳՐՈՒԱԾ ԵՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԱԾ Ե ՎԵՐԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի ատենապետ Լիւսմիլա Սարգսեան այն կարծիքը յայտնեց, որ Կուսակցութեան «Սարգիս Տիրունի» ուսանողական միութեան ատենապետ Նարեկ Գալստեանին դաժան ծեծի ենթարկելու հրահանգը տրուած էր իշխանական վերին օղակներէն»:



Ընկ. Նարեկ Գալստեան հիւանդանոցի անկողինին վրայ իսկ ցոյց կու տայ յաղթանակի նշանը

Հինգշաբթի, Նոյեմբեր 15-ի առաւօտեան Գալստեանին ծեծի ենթարկած էին անյայտ անձինք, որու հետեւանքով ան տեղափոխուած էր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունք:

Ուրբաթ օր, ՍԴՀԿ գրասենեակէն ներս տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքին, Ընկերուհի Սարգսեան ըսաւ նաեւ, որ կապ կայ այդ բռնութեան եւ Նոյեմբեր 13-ին Նարեկ Գալստեանին եւ ու-

սանողական միութեան մէկ այլ անդամի թուոցիկներ փակցնելու համար ոստիկանութիւն բերման ենթարկելու միջոց:

Լիւսմիլա Սարգսեան յայտարարեց, որ Նոյեմբերի 13-ին Նարեկ Գալստեանին եւ Էդմոնդ Մակարեանին ոստիկանատան մէջ ծեծի ենթարկած է Ոստիկանու-

Շաբ.ը էջ 4

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի անունով խոստագոյն կը դատապարտենք Նոյեմբեր 15ի առաւօտուն անյայտ ու դիմակաւոր անձերու կողմէ՝ Հայաստանի «Սարգիս Տիրունի Ռուսաւորական Միութեան» ատենապետ Նարեկ Գալստեանի խոշտանգումի արարքը:

Որոնք որ ալ եղած ըլլան հեղինակները՝ արարքի ամբողջ պատասխանատու թիւնը կ'իյնայ Գոչարեանական վարչակարգի ուսերուն, գորս վերջին մի քանի շարքներու ընթացքին կրկին սանձազերծած է ահաբեկման ու հետապնդման իր տխրահոջակ քաղաքականութիւնը՝ ընդիմադիր դաշտի բոլոր այն ներկայացուցիչներուն դէմ որոնք բազու-թիւնը ունեցած են տէր կանգնելու իրենց տարրական քաղաքական իրաւունքներուն:

Կասկած չունիմք, որ այդ տմարդի արարքի հեղինակները ոչ միայն պիտի չհետապնդուին, այլ ընդհակառակը պիտի վարձատուրին իրենց պարտականութիւնը փայլուն կերպով կատարելու համար:

Խօսքի, խղի եւ գումարման ազատութիւնը Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացիի սահմանադրական իրաւունքն է:

Առ այդ՝ կը պահանջենք Հայաստանի ներկայ իշխանութիւններէն անյայտ դադրեցնել իրենց անօրինական եւ հակաժողովրդական արարքները ընդդէմ հայրենի ժողովուրդին:

Կոչ կ'ունդենք մաքուր բոլոր անոնց, որոնց համար թանկ են մայր Հայրենիքի քարոքութիւնն ու ժողովրդավարութեան սկզբունքները իրենց բողոքի ձայնը քարձրացնելու Հայաստանի իշխանութիւններուն ազգավնաս քաղաքականութեան դէմ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Ծրջանի Վարիչ Մարմին

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՄ ԵՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՄ

Հանրահավատքը սկսելուն դեռ բազմազան ժամանակ կար, երբ հասանք Ազատութեան հրապարակ, բայց հրապարակը արդեն լի էր մարդկանցով: Շուտ եկողներից էին լրագրողները, չատկապէս նրանք, ովքեր տեսախցիկի համար յարմար դիրքաւորուելու խնդիր ունէին: Հրապարակի մէջտեղում արդեն «Աբովեանը ձեզ հետ է», «Լուին ձեզ հետ է», «Գիւմրին ձեզ հետ է» եւ այլ պատաստներով կանգնած էին մարդերից եկածները: Աբովեանցիները, պարզուեց, շուտ են դուրս եկել, որ չպատահի լանկարծ խոչընդոտի հանդիպեն, բայց այս անգամ նրանց «հիասթափեցրել» էին. բոլոր ճանապարհները բաց էին:

Հանդիպեցինք հանրապետական երիտասարդների, որոնք, կուսակցութեան կրծքանշանը բոլորին ի տես ցուցադրած, մինչեւ հանրահավատքի սկսելը շրջում էին Ազատութեան հրապարակում: «Եկել եմ ուղղակի լսեմ, թէ ինչ են ասում, ասելիքը ո՞րն է, ժամանակի մէջ փոխուե՞լ է, թէ նոյնն է մնացել», - ասաց հանրապետական Սեւակը: Հանրապետականների «հաստատուն կամքը» որդեգրած Սեւակը կրկնեց «իր մեծերի» խօսքը. «Հանրապե-

Մի մարդ, որ հանգիստ տեղաւորուել էր աստիճաններին, մինչ ելույթների սկսելը ամէն անգամ բարկացած տեղից վեր էր կենում ու իր տեսողաշար փակողին նկատողութիւն էր անում: Յետոյ էլ տեսնելով, որ մարդիկ հետզհետէ շատանում են եւ բոլորին հնարաւոր չի լինի նկատողութիւն անել, գնաց-յնուեց բեմը եզերող «համերգային պարիապներին» ու այդպէս մնաց մինչեւ հանրահավատքի աւարտը:

1988թ.-ից հանրահավատքներին պարտաճանաչօրէն մասնակցող 82-ամեայ տատիկը այս հանրահավատքը եւս բաց չէր թողել, տեղաւորուել էր նստարանին ու ելույթի հետ միաժամանակ մտքեր էր փոխանակում կողքին տեղաւորուած մարդկանց հետ: «Է, ոչ շատ մարդիկ, ոչ էլ էդ ջահելները չեն հասկանում, որ ցուրտ ու մութ տարիները ինքը մեղաւոր չի եղել, սովետական միութիւնը քայքայուեց, ամէն ինչ նոր էր, պատերազմ էր, ինչի պիտի սպասէինք: Հիմա ի՞նչ է, ո՞նց ենք ապրում, 35 տարի աշխատել եմ, որ հիմա 13 հազար դրամ թոշակ եմ ստանամ»: Կողքին նստած 58-ամեայ տղամարդն էլ աւելացրեց. «Չէ, սրանք դեկավար չեն, սրանք

«Է, ոչ շատ մարդիկ, ոչ էլ էդ ջահելները չեն հասկանում, որ ցուրտ ու մութ տարիները ինքը մեղաւոր չի եղել, սովետական միութիւնը քայքայուեց, ամէն ինչ նոր էր, պատերազմ էր, ինչի պիտի սպասէինք»

տական թեկնածուի մրցակից չեմ տեսնում, մի փոքր դաշնակցութեան թեկնածուն, եթէ առաջադրուի, կարող է մրցակից լինել», - այս անգամ իր միամիտ կարծիքը յայտնեց նա:

«Մարդիկ հիմնականում եկել են գուտ հետաքրքրութիւնից, բացի այդ քանակ են ապահովում բարեկամ-հարազատները եւ այն խորտակուած մարդիկ, ովքեր չեն կարողացել կայանալ կեանքում, եւ ամէն ինչը բարդում են «կայացած» իշխանութիւնների վրայ», - ասաց Սեւակը:

Հանրահավատքը սկսեց, մենք էլ որոշեցինք շրջել ժողովուրդի մէջ ու հարցուփորձ անել: Հանրապետականի ենթադրութիւնները այդքան էլ ճիշդ չէին. ամբողջ մէջ հնչող խօսակցութիւններն ու արտայայտած կարծիքները այլ բան ցոյց տուեցին: Հանրապետականի հասակակից ոչ հանրապետական երկու աղջիկներ՝ սառած ու կծկուած, ուշադիր լսում էին ելույթները. «Չեմ ուզում նման պետութիւնում ապրել, դրա համար էլ եկել եմ, ուզում եմ ապրել մի երկրում, որտեղ իմ իրաւունքները կը յարգուեն, իսկ այստեղ ամէն քայլի ոտնահարում են եւ կարծում եմ Լեւոն Տէր-Պետրոսեանն է այն մարդը, որը արժանի է լինել Հայաստանի նախագահ եւ մեզ համար ապահովել օրինաւոր երկիր», - ասաց աղջիկներից մէկը, միւսն էլ, խօսելով առաջին նախագահի՝ ընտրութիւններում յաղթելու հաւանականութիւնների մասին, աւելացրեց. «Տեսնելով այստեղ հաւաքուած այս բազմութիւնը եւ լսելով մեր պաշտօնականների ցանկացած հարցի վերաբերեալ իրականացուող քայլերն ու ներկայիս պատասխանները՝ ամէն ինչ պարզ է դառնում»:

պէտք է հեռանան: Մի նախագահ, որ ասի «լաչառութիւն», «ձեր տակը» չզրկեմ ինչ, բա դա ասելու բա՞ն է»: Շուտով խօսակցութեանը միացան նաեւ միւսները. «Թողէ՛ք, հանգիստ գնացէ՛ք, ինչքան կերաք, հերիք է՛ք», - ասաց մէկը. «չէ՛ դրանք էլ պէտք հանգիստ չպէտք է պրծնեն, պիտի պատասխան տան, ով ուզում է լինի», - աւելացրեց միւսը: Խօսակցութիւնը դեռ էլի կը թեժանար, եթէ մէկը չգոռար. «Վերջացրէ՛ք, հիմա Լեւոնն է խօսելու»:

Բազմութեան մէջ հանդիպեցինք նաեւ երիտասարդների, որոնք, ամբողջի միջով ճանապարհ հարթելով, շրջում էին հրապարակում. «Ինձ հետաքրքիր է, Լեւոն Տէր-Պետրոսեանը ինձ համար հեղինակութիւն էր, արժանապատիւ մարդ, ոչ թէ շարքային կուսակցութեան նախագահ, ի՞նչը ստիպեց նրան ելույթ ունենալ ժողովրդի առաջ», - հարցնում էր Կարէնը ինքն իրեն ու փորձում էր համար ճշդել պատասխանը:

Շատերն էլ վստահ էին, որ այն ամէնը, ինչ ուզում էին իմանալ ոչ մամուլից, ոչ էլ հեռուստատեսութիւնից չէին իմանալ, դրա համար էլ եկել էին: Մէկն էլ սառած ընկերովը ասում էր. «Տեսնում ես, այսպէս տպաւորութիւնը լրիւ ուրիշ է, քան իմ պատմելով»:

Ներկաների ընդհանուր տրամադրութիւններից առանձնացողը արեւածաղիկ վաճառող պապիկն էր, որն ուրախացած այս ու այն կողմ վերջին մնացած արեւածաղիկն էր առաջարկում. «Շատ լաւ է, շատ լաւ է», - չզրկես հանրահավատքի, ելույթների, թէ իր վաճառած արեւածաղիկի մասին ասաց պապիկը:

Ա. ԵՂԻԱՋԱՐԵԱՆ «ՏԱՐԵԳԻՐ»

ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԵՆ

Նոյեմբերի 8-10-ը «Առաւօտի» հետ համագործակցող APR group սոցիոլոգիական ընկերութիւնը հերթական հեռախօսային հարցումն է անցկացրել 663 երեւանցիների շրջանում: Չնայած հարցման արդիւնքները պատրաստ էին երեքշաբթի օրը, մենք դրանք չէինք հրապարակում, որպէսզի անցանկալի կապ չստեղծուի երեկ տեղի ունեցած հանրահավատքի հետ: Այդ թուերի հրապարակումը յարգարժան ընդդիմադիրները կարող էին դիտել որպէս հասարակական կարծիքի վրայ ազդելու, «համաժողովրդական շարժման թափը կտարելու» փորձ, որով-

վարկանիշը կարելի է համարել կայուն, քանի որ, չի շեղնենք, տուեալ հարցման ճշգրտութեան աստիճանը +-4% է:

Հետաքրքիր է, որ, հարցման համաձայն, 2007-ի Յունուարի հետ համեմատած, այսօր պակասել են ընդդիմադիր տրամադրութիւնները: «Հնարաւոր էք համարում ձեր եւ ձեր ընտանիքի անդամների մասնակցութիւնը զանգուածային ցոյցերին» հարցին՝ այս տարուայ Յունուարի 14-ին հարցուողների 71,2%-ն է դրականօրէն պատասխանել, իսկ այժմ՝ 59,3%-ը: «Դուք համաձայն էք, որ ՀՀ քաղաքացիների մեծ մասը զգում են իրենց

Ըստ հարցման արդիւնքների, Սերժ Սարգսեանին ձայն կը տային երեւանցիների 17,3%-ը, Լեւոն Տէր-Պետրոսեանին՝ 7,1%-ը, Բաճֆի Յովհաննիսեանին՝ 2,9%-ը, Վարդան Օսկանեանին՝ 2,7%-ը, Արթուր Բաղդասարեանին՝ 2,6%-ը, Վազգէն Մանուկեանին՝ 1,5%-ը Մնացած գործիչները ստացել են 1%-ից պակաս ձայներ

հետեւ հարցման արդիւնքներն ամենեւին էլ ոգեւորիչ չեն ընդդիմադիրների, ընդ որում՝ բոլոր ընդդիմադիրների համար: Սակայն արդէն բազմիցս առիթ ենք ունեցել յայտնելու, որ «Առաւօտը» մտադրութիւնը չունի ոեւէ մէկին ուրախացնելու կամ տիրեցնելու, ոեւէ մէկի «դուխը գցելու» կամ բարձրացնելու, առաւել եւս՝ որեւէ մի քաղաքական թիմի քարոզչութեանը լծուելու՝ դրա համար կան բազմաթիւ հեռուստաընկերութիւններ եւ թերթեր: «Սերժականներին», «լեւոնականներին», ինչպէս նաեւ «արթուրականներին», «վազգէնականներին», «կարապետիչականներին» եւ այլոց հետ մենք ընդհանուր գործ չենք անում, չնայած բոլորին յարգում ենք եւ ողջունում ենք նրանց ելույթները «Առաւօտի» էջերում: Մենք փորձում ենք ներկայացնել իրականութիւնը՝ ինչպէս որ կայ: Մնացածը թողնում ենք ընթացողներին:

Եւ այսպէս, եթէ նախագահական ընտրութիւններն անցկացուէին «այս կիրակի օրը» (նկատի է առնուել Նոյեմբերի 11-ը), ապա, ըստ այդ հարցման, Սերժ Սարգսեանին ձայն կը տային երեւանցիների 17,3%-ը, Լեւոն Տէր-Պետրոսեանին՝ 7,1%-ը, Բաճֆի Յովհաննիսեանին՝ 2,9%-ը, Վարդան Օսկանեանին (որը դժուար թէ առաջադրուի)՝ 2,7%-ը, Արթուր Բաղդասարեանին՝ 2,6%-ը, Վազգէն Մանուկեանին՝ 1,5%-ը: Մնացած գործիչները ստացել են 1%-ից պակաս ձայներ: Բոլորին դէմ է (նման տող հարցաթերթիկում չկայ) 12,7%-ը, վստահօրէն չի մասնակցելու 3,2%-ը, դժուարացաւ պատասխանել 36%-ը, հրաժարուեց պատասխանել 4,1%-ը, ասաց, թէ իր ընտրութիւնը «զաղտնիք» է՝ 4,5%-ը: Յատկապէս վերջին երկու պատասխանը ընդդիմութիւնը կարող է իր համար լուրջ ռեզերվ համարել: Յիշեցնենք, որ APR-ը նման հարցումներ է անցկացրել Սեպտեմբերի 4-ին, Հոկտեմբերի 18-ին եւ 29-ին եւ, այս վերջինը՝ Նոյեմբերի 10-ին: Հարցման առաջատարների դիմաձայն հետեւեալն է. Սերժ Սարգսեան՝ 11,5%, 16,6%, 14,5%, 17,3%, Լեւոն Տէր-Պետրոսեան՝ 2,9% (երբ դեռ յայտնի չէր վերադառնալու է քաղաքականութիւն, թէ՞ ոչ), 9,8%, 7,4%, 7,1%: Բացի Տէր-Պետրոսեանի առաջին «թուիչից», երկու քաղաքական գործիչների

օրէնքով պաշտպանուած» հարցին՝ Յունուարի 14-ին բացասական պատասխան են տուել 90,6%-ը, այժմ՝ 78,1%-ը: «Դուք վստահուած էք իշխանութեան օղակներին» հարցին՝ Յունուարի 14-ին երեւանցիների 83,8%-ը տուել է բացասական պատասխան, այժմ՝ 67,4%-ը:

Ինչպէս միշտ, հարցման արդիւնքներից դժգոհներին, նաեւ՝ չափից դուրս ոգեւորուածներին առաջարկում ենք զանգահարել APR group՝ 091-300-748:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ «ԱՌԱԻՕՏ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՉՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՄԱՆԻՏԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՍԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԳԱԻԹԵԱՆ  
Հեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104



ԼՈՒՐԵՐ

ԻՆՉ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ ՄԻՒ ՌԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅՔ-ՖԷ»: Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջարկում է քաղաքական ուժերին աջակցել իրեն, ինչի պարագայում ինքը երբեք տարի անց հրաժարական կը տայ եւ կը հեռանայ քաղաքական ուժերից ընդհանրապէս:

Այս յայտարարութիւնը «Ժառանգութիւն» կուսակցութեան համար անսպասելի է եղել: Թէ ինչ որոշում կը կայացնի կուսակցութեան վարչութիւնը, պարզ կը լինի աւելի ուշ, երբ Բաֆֆի Յովհաննիսեանը վերադառնայ Հայաստան: ՕԵԿ-ը Տէր-Պետրոսեանի առաջարկութիւնը կը քննարկի վարչութեան նիստում՝ ի թիւս այլ հարցերի:

«Նոր ժամանակներ» կուսակցութիւնը բարձր է գնահատում ընդդիմադիր դաշտում տեղի ունեցող բոլոր գործընթացները եւ համոզմունք է յայտնում, որ «որպէս իրական ընդդիմադիր՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը քարոզարշաւի վերջում կը պաշտպանի Արամ Կարապետեանին», որովհետեւ ՆՖԿ-ում համոզուած են, որ հենց իրենց առաջնորդն է յղթելու իշխանական թեկնածուին:

Տէր-Պետրոսեանի առաջարկն այսօր արդեն մերժում է ԺԿ նախագահ Տիգրան Կարապետեանը: «Ես կարծում եմ, որ Հայաստանին պէտք է ապագան, ոչ թէ

անցեալը, կամ ներկան: Եթէ իրենք աշխատել են ունեցել են հնարաւորութիւն, գուցէ կան քաղաքական ուժեր, որոնք ուզում են այդ հնարաւորութիւնը ունենալ, այդ առումով, ես կողմնակից եմ նոր ուժերի»: Երբ փորձեցինք պարզել, թէ ով է նոր ուժ, Տիգրան Կարապետեանը ասաց. «Միայն մենք»:

«Ազգային Միաբանութիւն» կուսակցութեան նախագահութիւնը դրականօրէն է բնութագրում Տէր-Պետրոսեանի պատրաստակամութիւնը՝ ծառայելու որպէս գործիք՝ ցանկացած ընդդիմադիր ուժի համար, ինչիւր ունենալով ձեռքազատուել այս իշխանութիւններից»,- «Ա.1+»-ին ասաց ԱՄ նախագահ Արտաշէս Գեղամեանը: Նա տեղեկացրեց, որ ԱՄ նախագահութիւնը առաջիկայում քննութեան կ'առնի, թէ «ինչ ճանապարհով, ինչ եղանակով օգտագործել Լեւոն Տէր-Պետրոսեանի կարողութիւնները իրենց սեփական պայքարի գինանոցը հարստացնելու նպատակով»:

Սակայն պարոն Գեղամեանին մտահոգել էին այլ ինչիւրներ. մասնաւորապէս՝ «այն, որ կրկին փորձ է կատարուած երկիրը բաժանել սեւի եւ սպիտակի, ինչը ներկայ վիճակում, մեր կողմից մերժելի եւ անընդունելի է եւ արդէն իսկ պատմութեան կողմից դատապարտուած»:

«ՄԻ ՀԱՏ ԴՐԱՆ ԼՈՒՅՐԻՔ ՈՒ ՏԱՐԷ ԷԴՏԵՂԻՑ»



Ոստիկանները կը փորձեն հեռացնել բողոքող քաղաքացիին

Նոյեմբեր 16-ին Հիւսիսային պողոտայի բացման արարողութեան ժամանակ Ռոբերտ Քոչարեանը եւ նրան ուղեկցող չինովիկները պողոտայով շրջելիս, հասնելով Թուամանեան փողոց՝ շրջանցեցին բողոքի ցույցը, որը կազմակերպել էին այդ պողոտայի՝ իրենց տներից վտարուած բնակիչները:

Նրանց հայրենի ոստիկանները՝ կարմիր բերետաւորների հետ միասին, արդէն աքցանի մէջ էին առել: Բայց ցուցարար մի տիկին՝ Ալվարդ Աւագեանը, փորձեց անվտանգութեան աշխատակիցների շղթան ճեղքել եւ մտնել Քոչարեանին: Տիկինն այնքան էր վրդովուած, որ բարձրաձայն մի քանի «քաղցր» խօսք ուղղեց նրան ու

նրա ուղեկցողներին: Դա լսելով՝ Ռոբերտ Քոչարեանը տեղում հրահանգեց. «Մի հատ դրան լուցրէք ու տարէք հըտեղից»: Ոստիկանները գործի անցան՝ փորձելով «կարգի հրահիւրել» բողոքաւոր կնոջը: Այդ գործը ստանձնեց ՀՀ ոստիկանութեան ՊՊԾ վարչութեան պետ, ոստիկանութեան գնդապետ, «Բազազ» մականուամբ Ռոբերտ Մելքոնեանը, որը հանրութեանը յայտնի է որպէս Հոկտեմբերի 23-ի խաղաղ երթի մասնակիցների նկատմամբ կատարուած բռնութիւնների ղեկավար: Բարեբախտաբար, այս անգամ «անզգոյշ քաջքուք» չեղաւ, ինչպէս եղել էր «Պապլապոկում»՝ Պօղոս Պօղոսեանի հետ:

ՀՐԱՆԴ ՎԱՐԴԱՆԵԱՆ. «ՍԱՏԱՐԵԼՈՒ ԵՄ ԳՈՐԾՈՂ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանեան խոշոր գործարարներից Հրանդ Վարդանեանը առաջիկայ նախագահական ընտրութիւններում պաշտպանելու է Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը:



Հայաստանի խոշոր գործարարներէն Հրանդ Վարդանեան

Երկուշաբթի օրը ի պատասխան «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ առաջիկայ նախագահական ընտրութիւններում ում է սատարելու, Վարդանեան պատասխանեց. - «Իհարկէ, գործող իշխանութիւններին»:

«Այդտեղ ինչ-որ մի մեծ գաղտնիք չկայ», - ասաց նա՝ յաւելելով. - «Այսինքն՝ Սերժ Սարգսեանին»:

Հրանդ Վարդանեանը փաստարկեց, թէ գնահատում է Սերժ Սարգսեանի «աշխատանքային կարողութիւնները»:

Հրանդ Վարդանեանը հաստատեց, որ այս պահին Հարկային պետական ծառայութիւնը ստուգումներ է անցկացնում «Գրանդ Տրեկո», «Գրանդ քենդի» եւ իրենց ընտանիքին պատկանող «առեւտրային մի կազմակերպութիւնում»:

Նրա խօսքերով՝ անգամ չարաշահումներ չեն յայտնաբերուել. - «Ես այս երկրի հինգերորդ հարկատուն եմ: Այնպէս որ, բազմաթիւ չարաշահումներ չեն կարող

լինել: Այդ դէպքում ես կը լինէի 50-րդը կամ 150-րդը»:

Դիտարկմանը, թէ իր որդիները Ազգային ժողովում անդամակցել եւ անդամակցում են ՀՅԴ խմբակցութեանը (աւագ որդին՝ նախկին, իսկ կրտսերը՝ ներկայ գումարման խորհրդարանում), եւ հարցին, թէ ՀՀԿ-ի թեկնածուին պաշտպանելու դէպքում արդեօք իրենից չի նեղանայ ՀՅԴ-ն, Հրանդ Վարդանեանը արձագանքեց. - «Ոչ մի դէպքում: Դաշնակցականները, ինձ թւում է, իրենք էլ հասկանում են, որ պէտք է պաշտպանել այն մարդուն, որը կարող է այդ լուծը տանել»:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՋՉՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱԹԱՆԿ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼ Է «ԱՐՄԵՆԻԱ» ԴԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: 2008-ի նախագահական ընտրութիւնների քարոզարշաւի ժամանակ հեռուստաթերի տրամադրման առաջիկայում ամենաթանկ գինը սահմանել է «Արմենիա» հեռուստաընկերութիւնը՝ մէկ րոպէն 130 հազար դրամ: Ընդ որում՝ նախագահի իւրաքանչիւր թեկնածուի տրամադրուելու է օրական 6 րոպէից ոչ աւելի եթեր:

«Արմենիա»-ն նոյն գինն էր սահմանել նաեւ անցած Մայիսի խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ, եւ, ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց հեռուստաընկերութեան գործադիր տնօրէն Գաբիկ Մկրտչեանը՝ «պատուէրների պակաս չի ունեցել»:

Երկրորդ տեղում «Շանթ»-ը եւ «ԱԼՄ»-ն են՝ 120 հազար դրամ: «ԱԼՄ» հեռուստաընկերութեան նախագահ Տիգրան Կարապետեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում չի շեղեցրեց, որ իրենք գինը չեն փոխել. - «Կոպեկ առ

կոպեկ նոյն խորհրդարանական ընտրութիւնների [ժամանակ] սահմանուած գինն է»:

«Երկիր Մեդիա»-ն քաղաքական գովազդի ըրպէսվճարը սահմանել է 100 հազար դրամ, եւ, ինչպէս յաւելեց հեռուստաընկերութեան լրատուական եւ քաղաքական ծրագրերի տնօրէն Գեղամ Մանուկեանը, ունի քաղաքական հաղորդումների անվճար փաթեթ՝ բոլորի համար:

«Հ2» հեռուստաընկերութեան «Լրաբեր» ծրագրի ղեկավար Շաւարշ Գէորգեանի փոխանցմամբ, իրենց եթերում քաղաքական գովազդի մէկ րոպէի գինը սահմանուել է 108 հազար դրամ: Նոյնն է, ըստ «Կենտրոն» հեռուստաընկերութեան գովազդային բաժնի ղեկավար Գոռ Մարտիրոսեանի, իրենց սահմանած ըրպէսվճարը:

Հանրային հեռուստաընկերութիւնը դեռեւս անցած շաբաթ էր սահմանել քաղաքական գովազդի մէկ րոպէի գինը՝ 80 հազար դրամ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ԿԱՏԱՐՈՒԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹԸ

Հայաստանի Ազգային ժողովը Նոյեմբեր 16-ին գումարած արտահերթ նիստում երկրորդ ընթացքում եւ ամբողջութեամբ ընդունեց Ընտրական օրէնագրքում իշխանամէտ պատգամաւորների կողմից առաջարկուած փոփոխութիւնների փաթեթը: Փոփոխութիւններն ուժի մէջ կը մտնեն

հրապարակման յաջորդ օրը: Դէմ քուէարկողներ չեղան, իսկ ձեռնպահ քուէարկեցին 11 պատգամաւոր: Ձեռնպահ էին քուէարկել 9 պատգամաւոր «Օրինաց երկիր» եւ «Ժառանգութիւն» խմբակցութիւններից (վերջինիս երկու պատգամաւոր՝ Խաչիկ Պետրոսեանը եւ

Սերյոժա Աբրահամեանը կողմ քուէարկեցին), ՀՀԿ-ի խմբակցութիւնից Արմէն Աշոտեանը եւ «Բարգաւաճ Հայաստան»-ից Նաիրա Զոհրաբեանը: Զոհրաբեանին դուր չի գալիս, որ, ըստ փոփոխութիւնների, քուէարկութեանը մասնակցելուց յետոյ ընտրողների անձնագրերում գրուելու են դրոշմակնիքներ: Նրա պնդմամբ, դա մարդու իրաւունք-

ների խախտում է: Ընդունուած փոփոխութիւններով, նախագահի թեկնածուին նախընտրական գրաւը կը լինի 8 միլիոն դրամ: Եւ թեկնածուները չեն կարողանայ առաջադրուել դաշինքների կողմից կամ քաղաքացիական նախաձեռնութեամբ. պէտք է ինքնաառաջադրուել կամ նրանց թեկնածութիւնները պէտք է ներկայացնեն կուսակցութիւնները:

**ԼՈՒՐԵՐ**

**«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ» ԹՈՒՐՔԻԱՆ ՓԱԿԵԼ Է ԵՐԵՒԱՆԻՑ ՅԱԼԷՊ ՈՒ ՊԵՅՐՈՒԹ ԶՈՒԵՐԹՆԵՐՈՒ ԸԱՍԲԱՆ**

**«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:** «Արմաւիա» ընկերութիւնը չի կարողացել չուերթներ իրականացնել Երեւան - Հալէպ եւ Երեւան - Պէյրութ ուղղութիւններով: «Արմաւիա» ընկերութիւնից «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեցին, որ Թուրքիայի աւիացիոն իշխանութիւնները տեղեկացրել են, որ «օդային այդ ուղիով չուերթներ իրականացնելը նպատակաւորմար չէ»՝ տեխնիկական պատճառներով:

«Թուրքիայի աւիացիոն իշխանութիւնները պաշտօնապէս արդէն մեզ տեղեկացրել էին, որ Երեւան - Պէյրութ եւ Երեւան - Հալէպ թռիչքների տեխնիկական պատասարկման տեսանկիւնից խնդիրներ կան եւ ժամանակաւորապէս, թերեւս, չեն սպասարկուելու տուեալ թռիչքները», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Հայաստանի քաղաքացիայի գլխաւոր վարչութեան պետի մամուլի խօսնակ Գայանէ Դաւթեանը: - «Իսկ մենք նորմալ իսթանպուլ - Երեւանը անում ենք, այսինքն՝ բոլոր մեր եւրոպական թռիչքները անցնում են Թուրքիայի օդային տարածքով: Խնդիր, ըստ էութեան, չկայ»:

Ստացում է, որ ո՛չ Հայաստանի քաղաքացիայի վարչութիւնում, ո՛չ էլ «Արմաւիա»-ում

տեղեկ չեն, թէ ինչու է Թուրքիան որոշել փակել դէպի Հալէպ եւ Պէյրութ տանող օդային ճանապարհը:

Ուշագրաւ է, սակայն, որ, ի տարբերութիւն «Արմաւիա»-ի, «Ատորոն» սիրիական աւիաընկերութիւնը չենց այս շաբաթ իրականացնելու է չուերթ Երեւանից դէպի Հալէպ եւ Դամասկոս: Այս աւիաընկերութիւնից «Ազատութիւն» ռադիոկայանին տեղեկացրին, որ օդային սահմանը բաց է:

Հայաստանի արտաքին գործերի նախարարութեան խօսնակ Վլադիմիր Կարապետեանը, ի պատասխան «Ազատութիւն» ռադիոկայանի հարցմանը, ասաց հետեւեալը. - «Ես կարող եմ հաստատել, որ քաղաքացիայի վարչութիւնից մեզ դիմել են: Իրենք նախապէս եղել են կապի մէջ Թուրքիական աւիացիոն իշխանութիւնների հետ, եւ միայն նրանից յետոյ, որ չեն ստացել բաւարար պատասխաններ Թուրքիական կողմից, խնդրել են մեզ միջամտել այս հարցի կարգաւորմանը: Մենք էլ, մեր հերթին, դիւանագիտական կապուղիներով դիմել ենք Թուրքիական իշխանութիւններին՝ խնդրելով պարզաբանել ստեղծուած իրավիճակը... Դեռեւս որեւէ պատասխան չկայ. երէկ է ուղարկուել մեր յայտագիրը»:

**ԹՐՔԱԼԵԶՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԶԵՆՈՒՆԵԼ ՅԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԸԱՆԱԶՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

**«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:** Պաքուում աւարտուած Թրքալեզու երկրների բարեկամութեան, եղբայրութեան եւ համագործակցութեան 11-րդ համագումարը ընդունել է յայտարարութիւն, որով համաշխարհային հանրութեանը կոչ է արել չընդունել Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ որոշումներ:

Ատրպէյճանական «Թրենդ» գործակալութեան տեղեկացմամբ, համագումարի մասնակիցները կոչ են արել միջազգային հանրութեանը «հանդէս գալ ճիշդ եւ անաչառ» գործողութիւններով:

Փաստաթղթում ասիտանք է արտայայտուած, որ «1915 թուականի հայոց ցեղասպանութիւնը, որը չունի փաստական հիմքեր, որոշ երկրների խորհրդարաններում քննարկման է դրուում».- «Արդիւն-

քում ընդունում են որոշումներ, որոնք հակասում են միջազգային իրաւունքի նորմերին եւ առաջ են բերում թրքալեզու աշխարհի վրդովմունքը: Այդ որոշումները նպաստում են հասակակցութեան տարածմանը, բացասաբար են անդրադառնում տարածաշրջանում կայունութեան եւ խաղաղութեան վրայ եւ անդունդ են առաջացնում երկու ժողովուրդների միջեւ»:

«Մենք՝ համագումարի մասնակիցներս, կոչ ենք անում չընդառաջել հայերի յաւակնութիւններին: Այն փաստը, որ Թուրքիան առաջարկել է ստեղծել կոմիտէ եւ քննարկել այդ հարցը, իսկ Հայաստանը հրաժարուել է մասնակցել քննարկումներին, նշանակում է, որ ճշմարտութիւնը մեր կողմում է», - յայտարարում են համագումարի մասնակիցները.

**ՂԱՐԱԲԱՂԻ ԻՍՐԱԷԼԻԱՆԻ ԿՐԻՍՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅ ԲԱԿՕ ՍԱՅԱԿԵԱՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԷՋ**

Շարունակուած էջ 1-էն

իա Մեհրանեան, Ղարաբաղի Հայց. Առաք. եկեղեցւոյ առաջնորդ՝ Գերշ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան, Լոս Անճելոսի մօտ Հայաստանի աւագ գիւպատոս Արմէն Լիլոյեան, ինչպէս նաեւ Գաբրիէլ Մոլոյեան (Մ.Դ.Հ.Կ.), Արա Ահարոնեան (Ռ.Ա.Կ.), Վիգէն Յովսէփեան (Հ.Յ.Դ.), Հայաստան Հիմնադրամի կեդրոնական վարչութեան տնօրէն Վահէ Աղաբեկեանց եւ Յակոբ Շիր-

**«ԱՔՍԱ»-Ն ԿՃԱՐԵՑ ԱՌԱՋԻՆ ՄԻԼԻՈՆԸ**

**«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:** Ֆրանսիական «Աքսա» ապահովագրական ընկերութիւնը վճարել է առաջին միլիոնը 17,5 միլիոն դոլար ընդհանուր գումարից, որը, ըստ ձեռք բերուած համաձայնութեան, պէտք է որպէս փոխհատուցում տրամադրուի օսմանեան Թուրքիայում ընկերութիւնում ապահովագրուած, ապա ցեղասպանութեան զոհ դարձած հայերի ժառանգներին:

«Ֆրանսայրես» գործակալութեան վկայութեամբ, Նոյեմբեր 19-ին «Աքսա»-ի յատկացրած 680 հազար եւրոն փոխանցուել է Ֆրանսիայում գործող հայկական բարեգործական կազմակերպութիւններին: Մնացած գումարը յատկացուելու է Հայոց ցեղասպանութեան զոհերի ժառանգներին, ովքեր մինչեւ 2008 թուականի Յունուարի 7-ը պէտք է գրանցուեն [www.armenianinsurance.com](http://www.armenianinsurance.com) կայքէջում: Մինչ օրս գրանցուել են շուրջ 5 հազար դիմումատուներ՝ հիմնականում ԱՄՆ-ից, Հայաստանից եւ Ֆրանսիայից:

**ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԵՐԵՒԻ 3 ՏԱՐԻՆ ԲԱԻԱԿԱՆ Է ՂԱՐԱԲԱՂԸ ՅԱՆՁՆԵԼՈՒ ԻՍՍԱՐ»**

**«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:** Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսեանը, Նոյեմբեր 19-ին պատասխանելով լրագրողների հարցերին, անդրադարձաւ նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթին:

Մասնաւորապէս, նախկին նախագահի յայտարարութեան մասին, թէ Հայաստանի նախագահի պաշտօնը ստանձնելու դէպքում ուղիղ 3 տարի յետոյ «պատրաստ եմ ընդմիջտ հեռանալ քաղաքականութիւնից՝ ձեզ հնարաւորութիւն տալով լիովին ազատ եւ օրինական ընտրութիւնների միջոցով երկրի նոր նախագահ ընտրել», Սերժ Սարգսեանը ասաց. - «Երեւի համարում է, որ 3 տարին բաւական է Ղարաբաղը յանձնելու համար»:

**ՆԱՐԷԿ ԳԱԼՍԵԱՆԻ ՎՐԱՅ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ**

Շարունակուած էջ 1-էն

թեան Երեւանի վարչութեան պետն ու Կենտրոնի ոստիկանապետը:

«Մեծի են ենթարկուել, ստորացման են ենթարկուել... Հեղինակները եղել են ոստիկանութեան Երեւանի վարչութեան պետ, գեներալ-մայոր Ներսէս Նազարեանը, որը անձամբ ձեռք է տղաներին, եւ Կենտրոնի ոստիկանապետ Մեհրաբեանը», - ըսաւ Սարգսեան շարունակելով. - «Մենք չէինք մտածում, որ պէտք է հնչեցնել այս անունները, սակայն այսօր այդ մասին լռելը ուղղակի յանցագործութիւն է: Եթէ գեներալ-մայորը կարող է իրեն թոյլ տալ 19-20 տարեկան հայ երիտասարդին ձեռքի ենթարկել եւ թուցիկը անգամ փորձել են բերանը մտցնել՝ պիտի ուտես...»:

«Ես այս վերջին ձեռք Նարեկի նկատմամբ կիրառուած կապում եմ նոյն այդ մարդկանց անունների հետ, որոնք երկու օր յետոյ կատարեցին այդ գործողութիւնը՝ մտածելով, որ դրանով մեզ ահաբեկում են: Նրանք այդ ձեռով փորձեցին երիտասարդութեանը ահաբեկել», - ըսաւ Լիւսմիլա Սարգս-

Փոխհատուցման համաձայնութիւնը ընկերութեան հետ ձեռք է բերուել 2005 թուականին՝ Հայոց ցեղասպանութեան զոհերի ժառանգների կողմից Միացեալ Նահանգներում յարուցուած դատական գործընթացի արդիւնքում:

Ցեղասպանութեան ժառանգների շահերը պաշտպանող փաստաբաններից Բրայան Քաբաթէքը կարեւորել է, որպէսզի հնարաւորինս շատ մարդիկ ստուգեն՝ արդեօք իրենց ընտանիքները չիւտակուած են այդ կայքէջում:

2000 թուականին նոյնպիսի համաձայնութիւն էր ձեռք բերուել «Նիւ Եորք Լայֆ» ապահովագրական ընկերութեան հետ, որը Հայոց ցեղասպանութեան զոհերի ժառանգներին որպէս փոխհատուցում վճարեց 20 միլիոն դոլար:

Ցեղասպանութեան զոհերի ժառանգների փաստաբանները ներկայումս աշխատանքներ են տանում գերմանական «Դոյչէ Բանկ» եւ «Դրեզդներ Բանկ» դրամատների նկատմամբ համանման գործընթաց սկսելու ուղղութեամբ:

«Ինձ համար չափազանց տարօրինակ էր», - շարունակեց վարչապետը: - «Ուղղակի չափազանց տարօրինակ մտքեր հնչեցին այդ ելոյթում, բայց մեզնից իւրաքանչիւրը ինքն է որոշում, թէ ինչ ասի եւ ինչ առաջարկութիւններ անի: Որեւէ պերճախօսութեամբ հնարաւոր չէ մարդկանց աչքին թող փչել»:

«Եթէ ոեւէ մէկը փորձում է ապացուցել անապացուցելին, եթէ ոեւէ մէկը փորձում է ասել, որ այսօր աւելի վատ ենք ապրում, քան 10 տարի առաջ, դա արդէն իմ պրոբլեմը չէ, այլ այդ մարդու պրոբլեմն է: Որովհետեւ ինքը գործ ունի բոլորի հետ. բոլորի աչքերը հո չեն կարող փակել», - եզրափակեց Սերժ Սարգսեանը:

եան: «Ես չեմ կարծում, որ դա կոնկրետ ոստիկանութիւնն է... Հիմա ոստիկանութիւնը առանց վերեւից ուղղորդուելու ոչ մի քայլ չի անում: Դա ես կապում եմ անմիջապէս ամենավերեւների հետ: Այդ ամենը մտածուած է վերեւում եւ ուղղորդուած է վերեւից»:

Նարեկ Գալստեանի դէմ կատարուածը դատապարտեցին Հայաստանի գրեթէ բոլոր կուսակցութիւնները:

Դէպքին օրը, «Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւորները, ի նշան բողոքի, ցուցադրական դուրս եկան Ազգային ժողովի դահլիճէն եւ զօրակցական այցելութիւն կատարեցին հիւանդանոց:

Հիւանդանոց այցելեցին նաեւ բազմաթիւ այլ կուսակցական դեկավարներ եւ քաղաքական գործիչներ:

ՀՀ Մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեանի յանձնարարականով ստեղծուած աշխատանքային խումբը, հիւանդանոցին մէջ հանդիպում ունեցած է Նարեկ Գալստեանի հետ, ծանօթանալու համար դէպքի մանրամասնութիւններուն:

**ՄԱՍԻՍ**  
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



ԵԼՈՅԹ

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԵԼՈՅԹԻՑ ԱՌԱՋ

Ազատութեան հրապարակում տեղի ունեցած ընդդիմադիր ուժերի հանրահաւաքը վարում էր «Այլընտրանք» հասարակական քաղաքական նախաձեռնութեան անդամ Նիկոլ Փաշինեանը:

ՀժԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանը յայտարարեց, որ ՀժԿ-ն դատապարտում է Նարեկ Գալստեանին ծեծի ենթարկելու հանգամանքը: «Քրէական տարրերի միջոցով փորձում են ձեռք բերել ընդդիմութիւնը եւ հաստատել վախի մթնոլորտ: Ակնյայտ է, որ համայնու են հակառակ արդիւնքի: Սա է այս իշխանութեան գործելակերպը: Իշխանութիւնը պահելու համար, ինչպէս միշտ, դիմում են բիրտ ուժին»:

Ստեփան Դեմիրճեանը հարկ համարեց ասել, որ առաջիկայ տասը տարիներին Հայաստանի համար խիստ կարեւոր են նախագահի ընտրութիւնները: Ստեփան Դեմիրճեանն ասաց, որ անհրաժեշտ է ուժերի համախմբում, ընդդիմադիր ուժեղ բեւեռի միաւորում: «Որեւէ թեկնածու առանձին մասնակցելով ընտրութիւններին, որեւէ շանս չունի, եթէ նպատակը յաղթելն է: Այդ իսկ պատճառով ընդդիմադիր հօր բեւեռ ձեւաւորելու եւ կայացնելու նպատակով այս անգամ ես չեմ առաջադրում որպէս նախագահի թեկնածու»:

Ելոյթ ունեցաւ նաեւ Ազատական առաջադիմական կուսակցութեան նախագահ Յովհաննէս Յովհաննիսեանը: «Վարչախումբը եւ նրա ղեկավարութիւնը Հայաստանը հասցրել է աշխարհի իզոպոլ պետութիւնների շրջանակներ: Միջազգային քաղաքական քարտէզի վրայ Հայաստանը դուրս է մնացել որպէս պետութիւն, աւելին, Հայաստանը դուրս է մնացել նաեւ տարածաշրջանի քաղաքական քարտէզից: Հայաստանը դուրս է մնացել տարածաշրջանի բոլոր գործընթացներից, թէ քաղաքական, թէ տնտեսական», - յայտարարեց պարոն Յովհաննիսեանը՝ յաւելելով, որ այս իրավիճակի գինը ներկայ իշխանաւորների պաշտօններն են: Նա յայտարարեց նաեւ, որ ՀԱԱԿ-ն պաշտպանում է Տէր-Պետրոսեանի թեկնածութիւնը:

«Այսօր Հայաստանին ոչ թէ փրկիչներ, այլ փրկութիւն է անհրաժեշտ», - յայտարարեց Պահպանողական կուսակցութեան նախագահ Միքայէլ Հայրապետեանը: «Արդեօք այսօրուայ Հայաստանի մասին էինք մենք երազում 1988թուականին, երբ Արցախում արիւն էին թափում մեր եղբայրներն ու քոյրերը: Իհարկէ ոչ: Մեր երազը իրականութիւն դարձնելու համար, պէտք է հասկանանք, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը լաւագոյն միջոցն է, եւ մենք պէտք է ամուր կառչենք այդ միջոցից», - յայտարարեց Միքայէլ Հայրապետեանը:

Ապա ելոյթ ունեցաւ ՍԴՀԿ ատենապետ Լիւդմիլա Սարգսեանը: Նա խօսեց ՍԴՀԿ երիտասարդական թեւի ղեկավար Նարեկ Գալստեանի նկատմամբ կիրառուած բռնութեան մասին. «Իշխանութիւնները թոյլ են...», - այս ձեւակերպումը ուղղեց հանրահաւաքի մասնակիցներին. «Իշխանութիւնները չէ, բռնապետները», - լսուեց մի բացականչութիւն: «Ճիշդ է, որ ասում՝ բռնապետները թոյլ են, ոչնչացուած են եւ այլեւս փորձում են ուժ կիրառել մեր ապագայի, մեր երիտասարդի վրայ, որը ընդամէնը 20 տարեկան է: Մենք գիտակցուած ենք, թէ գնում, մենք գիտակցում ենք, թէ ուր ենք գնում եւ ում հետ, եւ վստահ ենք, որ հաստատ

յաղթելու ենք: Ոչ մի բռնարար էլ կարող մեր կամքը կոտրել: Դիմում ենք բոլոր երիտասարդներին՝ իշխանութիւնների նպատակն է կոտորել բոլոր երիտասարդներին: Յոյս ունեմ, որ բոլոր նրանք, ովքեր ընդունակ են քաղաքական կամք դրսեւորելու, ովքեր քաղաքական արիւթիւն ունեն, պէտք է մեր շարքերը օր-օրի աւելացնեն», - յայտարարեց Լիւդմիլա Սարգսեանը:

Ալեքսանդր Արզումանեանը հրապարակեց «Հայոց հայրենիք», «Մարդու իրաւունքներ-96», «Երրորդ հանրապետութիւն» եւ մի քանի տասնեակ այլ հասարակական քաղաքական կազմակերպութիւնների աջակցութիւնները, նաեւ «Հայրենիք ու պատիւ եւ «Ազատութիւն» կուսակցութիւնների յայտարարութիւնները, որոնք յայտնում են Տէր-Պետրոսեանին սատարելու պատրաստակամութիւն:

«Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանն իր ելոյթը սկսեց այս խօսքից. «Հանրապետութիւն» կուսակցութիւնը եւ կուսակցութեան բազմաթիւ համակիրներ անվերապահօրէն պաշտպանում են Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածութիւնը»: Ապա Արամ Սարգսեանը թուարկեց այն հեռուստաընկերութիւններին եւ ռադիոընկերութիւններին, որոնք չեն վարանել տեղեկատուութիւն տարածել հանրահաւաքի կազմակերպման վերաբերեալ: Արամ Սարգսեանը դատափետեց բոլոր ստորաբաժնի հեռուստաընկերութիւններին:

«Բոլորս գօտեպնդուենք եւ վստահ լինենք, որ շատ մօտ ապագայում Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջնորդած ազգային քաղաքական շարժումը քաղաքական աղբաւոց կը նետի այն ամէնը, ինչը իսկապէս սերտելի է», - յայտարարեց թիւ 37 ընտրատարածքում Սերժ Սարգսեանի եղբօր «չնորհիւ» պատգամաւոր չղարձած Սամուէլ Յարութիւնեանը: «Չարիքի նկատմամբ անտարբերութեանը փոխարինել է նպատակասլացութիւնը, հաստատակամութիւնը, վճռականութիւնը», - յայտարարեց Սամուէլ Յարութիւնեանը՝ իր հերթին ողջունելով Լեւոն Տէր-Պետրոսեանի վերադարձը քաղաքականութիւն:

Ելոյթ ունեցաւ նաեւ «ՍԻԼ Գրուպ» ընկերութեան պատգամաւոր նախագահ Խաչատուր Սուքիասեանը: «Մենք, ՀՀ քաղաքացիներս, կարծում ենք, ունենք բաւարար ուժ եւ վճռականութիւն, պաշտպանելու համար այն արժէքները, որ դրուած են մեր պետականութեան հիմքում», - յայտարարեց Խաչատուր Սուքիասեանը: «Մեր երկիրը թէ տնտեսութեան, թէ արտաքին եւ ներքին քաղաքականութեան բնագաւառում զգում է ռազմավարական նոր մօտեցումների կարիք: Մենք պէտք է կարողանանք յստակ ձեւակերպել մեր առաջ դրուած խնդիրները եւ ունենալ այդ խնդիրների լուծման իրատեսական ծրագրեր», - յայտարարեց «ՍԻԼ Գրուպի» պատուաւոր նախագահը: Նրա խօսքերով, Լեւոն Տէր-Պետրոսեանի վերադարձը քաղաքականութիւն նշանակում է իրատեսութեան եւ լրջութեան վերադարձ: «Որպէս մարդ ես հպարտ եմ, որ այսօր կանգնած եմ մեր երկրի հիմնադիր նախագահի կողքին», - յայտարարեց Խաչատուր Սուքիասեանը՝ ծափողոյնների ուղեկցութեամբ:

Նիկոլ Փաշինեանը յայտարարեց, թէ հանրահաւաքին մասնակցում էր 85 հազար քաղաքացի:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴԵՑ

Շարունակուած էջ 1-էն

Ժմի վերարտադրման վտանգը կանխելու մասին: Թէ՛ Ստեփան Դեմիրճեանի, թէ՛ Հրանդ Մարգարեանի, Վազգէն Մանուկեանի, Բաֆֆի Յովհաննիսեանի, Արտաշէս Գեղամեանի, Արթուր Բաղդասարեանի, Լիւդմիլա Սարգսեանի հետ հանդիպումներում ես նշել եմ, որ առաջիկայ ընտրարշաւում իմ միակ թիրախը լինելու է իշխանութիւնների ներկայացուցիչը»:

Տէր-Պետրոսեանը ամբողջ պատասխանատուութեամբ յայտարարեց, որ ՀՀԾ-ի ներկայացուցիչներն եւ ոչ մէկը ցանկութիւն չունի ապագայ իշխանութեան մէջ պաշտօն զբաղեցնելու եւ ինքը ոչ թէ պիտի առաջադրուի որպէս ՀՀԾ-ի թեկնածու, այլ քաղաքացիական նախաձեռնութեան հիմքով:

Լեւոն Տէր-Պետրոսեան պատասխանեց նաեւ «Ներկայ» եւ «Նախկին» իշխանութիւն հասկացութիւններուն եւ յայտարարեց. «Սերժ Սարգսեանը որքան ներկայ, այնքան էլ նախկին իշխանութիւն է եւ ինքը պատասխանատու է բոլոր այն «մեղքերի» համար, որ այսօր վերագրուած է նախկիններին:

«Նախկին իշխանական համակարգին հասցէագրուած որեւէ մեղադրանք ուղղակիօրէն վերաբերում է նաեւ Սերժ Սարգսեանին, քանի որ վերջինս նրա առանցքային պատասխանատուներից մէկն էր: Այս առումով աւելի քան տարօրինակ են Հանրապետական կուսակցութեան վերջին համագումարում նախկին իշխանութիւնների եւ անձամբ իմ հասցէին Սերժ Սարգսեանի հնչեցրած մեղադրանքները, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ գրպարտութիւն կամ ինքնախոստովանութիւն, առաւել եւս, եթէ նկատի ունենանք, որ մինչեւ 1998 թուականի իշխանափոխութիւնը նրա շուրթերից ոչ ոք իմ դէմ ուղղուած որեւէ քննադատական ակնարկ, կամ, ինչպէս ասում են, «թթու խօսք» անգամ չի լսել: Թէ ինչպիսի բարոյական նկարագրի տէր մարդ է յաւակնում Հայաստանի նախագահի աթոռին, թողնում եմ ձեր դատողութեանը», - ըսաւ Տէր Պետրոսեան:

Տէր-Պետրոսեանը նաեւ ներկայացուց «մութ ու ցուրտի» տարիներու երեւոյթը եւ չիչեցուց, որ մութ ու ցուրտ եղած է 1992 եւ 1994 թուականներուն: Իսկ պատերազմը, ոչ թէ ռազմական գործողութիւնները, սկսած է 1992 թուականի Մայիսի 9-ին եւ աւարտած՝ 1994 թուականի Մայիսի 12-ի հրադադարով: Ընթերցելով 1995 եւ 1996 թուականներուն ԼՂՀ նախագահ Ռոբերտ Բոչարեանի Լեւոն Տէր-Պետրոսեանին յղած նամակները, Տէր-Պետրոսեան Բոչարեանի իսկ խօսքերով ապացուցեց, որ Հայաստանի ողջ ներուժը ֆինանսական, էներգետիկ եւ այլ հնարաւորութիւնները ուղղուած էին Ղարաբաղի մէջ իրավիճակի պահպանման ու յաղթանակի ապահովման:

«Ես առաջիմ չեմ կարող պետական գաղտնիքներ հրապարակել, բաց հաւատարմութեամբ եմ, որ պատերազմի, գէնքի, գինամթերքի եւ վառելիքի հայթայթման եւ բանակի մատակարարման, Հայաստանի սահմանամերձ շրջանների պաշտպանութեան, խափանուած կոմունիկացիաների վրայ այնքան կոմար է ծախսուել, որ լիւրջ կը բաւարարէր



Լեւոն Տէր-Պետրոսեան Նոյեմբեր 16-ի հանրահաւաքի ընթացքին

մեր ժողովրդին թէ՛ լոյսով, թէ՛ ջերմութեամբ ապահովելու համար», - ըսաւ Տէր-Պետրոսեան, չիչեցնելով, որ 1993-95 թուականներուն Հայաստանի պաշտպանութեան նախարարը եղած է Սերժ Սարգսեան, որ ամբողջութեամբ կը տիրապետէ այդ գաղտնիքներուն:

Իր ելոյթին մէջ Տէր-Պետրոսեան նաեւ անդրադարձաւ սպասուող ընտրական կեղծիքներուն. «Սակայն կան հարցեր, որոնք պահանջում են հրատապ լուծում: Թէեւ անցած խորհրդարանական ընտրութիւնները բարձր գնահատուեցին միջազգային հանրութեան կողմից, բայց դրանք, թերեւս, Հայաստանի պատմութեան ամենախայտառակ ընտրութիւններն էին, քանի որ ընտրակեղծիքները քողարկուած էին այնպիսի ճարտարութեամբ, որ ոչ մի դիտորդ էջը կարող նկատել դրանք: Ընտրութիւնների ընթացքում իշխանութիւնների կողմից կիրառուել են, մասնաւորապէս, հետեւեալ երկու հնարքներ.

«Առաջին, տպագրուել է շուրջ կէս միլիոն չաւելեալ քուէաթերթիկ, որոնք բաժանուել են համայնքապետարանների աշխատակիցներին, հաւատարիմ գործարարներին, թաղային հեղինակութիւններին եւ նոյնիսկ քրէական տարրերին: Ընտրութիւնների օրը վերջիններս աւտոբուսներով ու միկրոատոբուսներով քաղաքացիներին բերել են ընտրատեղամաս, աւտոբուսում բաժանել արդէն քուէարկած թերթիկները, եւ ձեւական քուէարկութիւնից ու տեղամասում տրուած դատարկ քուէաթերթիկները ստանալուց յետոյ միայն վճարել նրանց:

«Երկրորդ, տասնեակ հազարաւոր մարդկանց իշխանութիւնները տրամադրել են կեղծ անձնագրեր կամ համապատասխան կնիքներով վաւերացուած գրանցման տեղեկանքներ, որոնց շնորհիւ նրանք հնարաւորութիւն են ստացել մի քանի անգամ քուէարկել տարբեր տեղամասերում: Նշուած հանձարեղ ընտրակեղծիքները, որոնք արժանի են տեղ գրաւելու արդի քաղաքագիտութեան դասագրքերում, ինչպէս ասացի, չէին կարող նկատուել դիտորդների կամ վստահուած անձանց կողմից».- ըսաւ Լեւոն Տէր Պետրոսեան ու յայտնեց, որ գոյութիւն ունին չափազանց պարզ մեխանիզմներ, որոնց միջոցաւ կարելի է վերացնել նմանատիպ կեղծիքները:

Ըստ ոստիկանութեան հանրահաւաքին մասնակցած են 7 հազար հոգիներ, իսկ ըստ կազմակերպիչներու՝ 85 հազար:

ԱՐՁԱՅԻՆ

ՅՈՒՐՏ ՈՒ ՄՈՒԹ ՏԱՐԻՆԵՐ ԵՒ ԱՐՑԱԽԵԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏ

ՅԱՐՈՒԹ ՏԵՐԴԱԻԹԵԱՆ

Եթէ տակաւին կային մարդիկ, որոնք կասկածներ ունէին թէ Քոչարեանական տարիները նպաստեցին Հայաստանէն ներս «ոգու սով»ի տարածման, ապա անոնց կասկածները պէտք է փարատած ըլլային, ի տես անցնող շաբաթներու իրողարձուութեանց: Նախկին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի քաղաքական գործօն դաշտ վերադարձի լուրերուն հետ աւելցան, ներկայ վարչախումբի մարդիկ, խուճապի մատնուած, սկսան աւելի ցայտուն դարձնել իրենց անանական կիրքերը, իրենց մտաւորական մերկութիւնը եւ ազգային ոգիէ պարպուած ըլլալու անակութիւնը:

Այս խուճապի ցայտուն արտայայտութիւններն են ամէն տեսակի ճնշումներն ու բռնարարները, որոնք կը գործադրուին բոլոր անոնց վրայ, որոնք ժողովուրդի մէջ կ'ուզեն հրահրել իրենց իրաւունքներուն տէր կանգնելու մարտունակութիւնը եւ ոչ թէ ճորտային համակերպութիւնը, որոնք կը շեփորեն ազատ խօսքի ու վիճաբանութեան հրապարակային ու լայնատարած կիւրաքանչիւր եւ ոչ թէ սպառնալիքներու, հետապնդումներու եւ վախի մթնոլորտի տարածումը, որոնք կը կարեւորեն առողջ դատողութեամբ արժանապատիւ կեանք վարելու հակառակութիւնը եւ ոչ թէ ստրկամիտ գոյութիւն մը քարշ տալու ստիպողութիւնը:

Թուենք քանի մը օրինակներ, աւելի պարզաբանելու համար մեր միտքը, թէ ինչպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ մը կը տիրէ մեր հայրենիքէն ներս:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 27, 1999

Հոկտեմբեր 27, 1999 սպանդը մեր նորագոյն պատմութեան ամենէն մեծ աղէտն է, որ ահաւոր հարուած հասցուց մեր պետականութեան զարգացման: Առաջին օրէն, ներկայ վարչախումբի ղեկավարները իրենց վրայ հրաւիրեցին ժողովուրդի կասկածները, թէ իրենք ամմասն չէին այդ ողբերգութեան ծրագրումէն թէ գործադրութենէն: Տարեց-տարի այդ կասկածները աւելի շեշտուեցան, այդ ողբերգութեան հանդէպ իրենց բռնած դիրքորոշումին պատճառաւ: Ահաւոր էր, մի քանի շաբաթներ առաջ, աղէտի տարելիցի նախօրէին, Հոկ-

տեմբեր 26, 2007ին, անոնց կազմակերպած ճրի էսթրատային համերգը, «Հրազդան» մարզադաշտին մէջ: Հասկնալի է, որ անոնք կ'ուզէին հակադարձել նոյն օրը, ազատութեան հրապարակի վրայ ընդդիմադրութեան կազմակերպած հանրահաւաքին: Բայց մարդ ի՞նչ աստիճանի անբարոյ սայթաքում պէտք է ունենայ, որ պաշտօնակիցներու նահատակութեան տարելիցի նախօրէին գուարձալի համերգ կազմակերպէ:

ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԹՆՈՂՈՐՏ

Մօտ 10 տարիներէ ի վեր Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան լուծ էր: Իրեն յաջորդած Ռոպերթ Քոչարեանը, մի քանի տարիներ առաջ նոյնիսկ յայտարարած էր, որ «շախմատ խաղալու եւ գիրք կարդալու ժամանակը անցած է», ակնյայտօրէն ակնարկելով իր նախորդի լուծութեան: Սեպտեմբեր 21ին Լեւոն Տէր Պետրոսեան մամուլի ասուլիս տուաւ: Մօտ 10 տարուայ լուծութենէ ետք, բնականաբար ժողովուրդը կ'ուզէր իմանալ թէ ի՞նչ պիտի ըսէր նախկին նախագահը: Բայց... շատացուեց: 20 րոպէ տեւած ելոյթը հրապարակաւ չի սփռուեցաւ: Իսկ այն միակ հեռուստակայանը, Գիւմրիի «կալա», որ համարձակեցաւ սփռել, արժանացաւ... հարկայիններու այցելութեան, ստուգումներու եւ ճնշումներու: Այն միակ գործարարը, որ յանդգնեցաւ նախկին նախագահի կողքին կենալ, եւ որ Հայաստանի պետական պիւճէին ամենէն շատ հարկ վճարողներէն է (հակառակ անոր որ իրմէ շատ աւելի մեծ գործարարներ շատ աւելի պակաս կը վճարեն), արժանացաւ ոչ միայն... հարկայիններու այցելութեան, ստուգումներու եւ ճնշումներու, այլեւ իր արտադրութեանց վրայ դրուած սեղմումներու եւ իր գլխաւոր պաշտօնեաներէն մէկուն ձերբակալութեան: Երբ Ազգային ժողովէն ներս այս մասին հարցադրում եղաւ վարչապետ Սերժ Սարգսեանի, ան ամենայն «անկեղծութեամբ» պատասխանեց «Մեր տնտեսութիւնը զարգացնելու եւ յաջողութեան հասնելու ամենահիմնական գործիքը հանրապետութիւնում բարոյահոգեբանական մթնոլորտի դրսեւորումն է... Ես չեմ կարող ոչ միայն

ամբիոնից, այլեւ ընհանրապէս չեմ կարող մէկի աչքին նայել ու սուտ ասել: Կարող են վկայել մեր հարկային եւ մաքային մարմինները»...

ՆԱՐԵԿ ԳԱԼՍԵԱՆ

Նկատելով որ հեռուստակայաններուն հրահանգուած է, ոչ միայն չի հեռասփռել, այլ նոյնիսկ չընդունիլ ընդդիմադրութեան կազմակերպելիք որեւէ հաւաքի մասին ազդ, թէկուզ վճարովի, ուստի ընդդիմադիրներուն կը մնայ ժողովուրդին մէջ ձեռք-ձեռք թռուցիկներ բաժնելով տարածել իրենց լուրերը: Նոյեմբեր 13ին, այսպիսի միջոցառման մը ընթացքին, կը ձերբակալուին Ս.Գ. Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տիրուհի» Ուսանողական Միութեան նախագահ՝ 20-ամեայ Նարեկ Գալստեանն ու անդամ էտմոն Մակարեանը: 3 ժամուայ հարցաքննութենէ, ձեռքերէ եւ սպառնալիքներէ ետք ազատ կ'արձակուին, երբ կողմնակիցներ կը սկսին հաւաքուիլ ոստիկանատան առջեւ: Զիրենք ձեռնոցներէն մին էր Երեւանի ոստիկանութեան վարչութեան պետ, գեներալ-մայոր Ներսիս Նազարեանը, որ անցեալ տարի Լուս Անճելոս այցելեց եւ իր բաժանմունքի «զարգացման» համար նուիրատուութիւններ հաւաքեց: Բայց իր սկզբնական ցանկին տեղ տարբեր պիտոյքներով մեկնեցաւ, ամօթի մէջ թողելով Փասատինայի հայազգի ոստիկանապետը: Որովհետեւ ձերբակալութեան լուրը կը տարածուի մամուլի մէջ, ուստի «դաս» մը տալու համար Նարեկին եւ իր միջոցաւ իր նմաններուն, Նոյեմբեր 15ին Երեւանի մէջ, օր ցերեկով 3 դիմակաւորներ կը խոշտանգեն զինք, սպառնալով՝ «եթէ թերթերին մի բան ասես՝ յաջորդ անգամ կը սպաննենք»: Նարեկ, գլխէն ստացած հարուածներուն պատճառաւ, արիւնյուլայ վիճակի մէջ կը փոխադրուի հիւանդանոց, ուր եւ կը մնար մինչեւ այս տողերու գրութիւնը:

Ի պատասխան այս մասին լրագրողի մը ուղղած հարցին, Ռոպերթ Քոչարեան կը պատասխանէր թէ «ինչպէս միշտ, ընտրութիւնների նախաշեմին ում հետ ինչ պատահի անպայման կապելու են քաղաքականութեան հետ: Օրինակ, ես այդ տղայի մասին կեանքում չէի լսել, չգիտէի որ այդպիսի գործիչ կայ, որ քաղաքականութեան մէջ կայ... Չեմ կարծում, որ որեւէ հետաքրքրութիւն ունէ մէկի համար ինք ներկայացնում էր»...

Բարոյահոգեբանական մթնոլորտի զարգացման ի նպաստ ինչպիսի արտայայտութիւն, որմէ կարծէք ետ չմնալու համար, Ազգային ժողովի պատգամաւոր, ՀՀԿ-ի անդամ Մկրտիչ Մինասեան կը յայտարարէ. «Փառք Աստուծոյ, ոչինչ չի եղել, ընդամենը ձեռուէլ է երիտասարդը»...

ՅՈՒՐՏ ՈՒ ՄՈՒԹ ՏԱՐԻՆԵՐ, Թէ՞

Մեզի համար, «ոգու սով»ի տարածման եւ բարոյահոգեբանական մթնոլորտի անկման մեծագոյն օրինակը կը մնայ Լեւոն Տէր Պետրոսեանի վերադարձի կապուիլը «ցուրտ ու մութ տարիներու» վերադարձի սպառնալիքին հետ: Ժամանակին Դաշնակցութեան ջատագով, իսկ ներկայիս Սերժ Սարգսեանի ջատագով դարձած «Հայոց Աշխարհ» թերթը կը զգուշացնէ իր ընթերցողները, որ «Լեւոն էֆենտի» վերադարձը նպաստաւոր չի կրնար ըլլալ երկրի շահերուն, ու կը շանձնարարէր, որ իրենց տուններուն մէջ աւելցնեն մոմի պաշարները...

Որեւէ հայ կազմակերպութեան, ունէ հայ քաղաքական ղեկավարի թէ մտաւորական առաջնահերթութիւնը պէտք է ըլլայ ժողովուրդի մէջ ազգային ինքնութեան եւ արժանապատուութեան ամրապնդումը: Նամանաւանդ մեր պատմութեան այս բախտորոշ ժամանակաշրջանին: Այս գծով մեծագոյն դեր կրնայ խաղալ Արցախեան ազատամարտի փաստը, որ մեր վերջին 1600-ամեայ պատմութեան մէջ աննախադէպ իրագործում է: Օրին գրած ու արտայայտուած ենք այս մասին: Վերջերս «Նոր Սերունդ» հեռուստաժամով Հայաստանի Հնչակեան կուսակցութեան ատենապետուհի՝ Լիւդմիլա Սարգսեանի հետ մեր վարած հարցազրոյցի ընթացքին, դարձեալ հանգամանօրէն անդրադարձանք այս փաստին: Այս յօդուածով եւ ի գին կրկնութեան, կ'ուզենք դարձեալ շեշտել թէ՛ 387 թուականէն ի վեր, երբ Արշակունեաց Հայաստանը բաժնուեցաւ Պարսկական եւ Բիզանդական կայսրութեանց միջեւ, մենք յարատեւօրէն հող կորսնցուցած ենք, մինչեւ որ Արցախեան ազատամարտով յեղաշրջեցինք այդ ընթացքը եւ հող ազատագրեցինք: Երբ ամէն տարի կը տօնենք ու կը հպարտանանք մօտիկ անցեալի նոյնիսկ արկածախնդրական դէպքեր...

Շարք էջ 7

1975-2008  
**33<sup>th</sup>**  
**ANNIVERSARY**  
Life, Health, Group Health  
Disability, Long Term Care  
**NEW YORK LIFE**

**ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է**  
ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
**ՊԵՏՐՈՍ ԵՒ ՄԻԱՍԱՆԹՈ ՄԱՐՈՆԵԱՆ**  
818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205  
E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"





ՀԱՅ ՄԱՍՈՒԼ

ՎԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԹՈՒՐՔԻԱՆ ԹՐԲԱՅՆԵԼՈՒ ԸԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ - «ՈՒՆԵԻՈՐՈՒԹԵԱՆ ՏՈՒՐՔ»

Հանրապետական թուրքիոյ կառավարութիւնը, Լոզանի Դաշնագրով ստիպողաբար երկրէն ներս մնացած փոքրամասնութիւնները՝ հայերը, չոյները եւ հրեաները տնտեսապէս սնանկացնելու, գանոնք փճացնելու, առեւտրական հրապարակէն հեռացնելու միտումով, 65 տարի առաջ, 1942-ի Նոյեմբերի 11-ին, խորհրդարանի յետմիջօրէի նիստին օրինագիծ մը ներկայացուց, որ նոյն նիստին վաւերացուեցաւ: »Ունեւորութեան Տուրք-Varlik Vergisi « կոչեալ այս 4305 թիւ օրէնքի կապակցութեամբ խորհրդարանի մէջ տրուած պաշտօնական տեղեկութիւնը »Երկրորդ Համաշխարհային Պատերազմի տարիներուն չարաշահութեամբ կուտակուած հարստութիւնը տուրքի ենթարկելու եւ շրջագայութեան մէջ գտնուող դրամի քանակութիւնը նուազեցնելու» եղած է: Սակայն միահեծան իշխող ձէ Հէ Փէ) ձուճուորիչէթ Հալք ֆարթիսի( կուսակցութեան երեսփոխաններուն 9 Նոյեմբեր 1942-ին գումարած դռնփակ նիստին վարչապետ Շիւքրիւ Սարաճօղլուին տուած տեղեկութիւնը բոլորովին տարբեր է. »Ունեւորութեան Տուրք«-ի օրէնքը թուրքիոյ տնտեսութիւնը օտարներուն ձեռքէն առնելու եւ գաջն թրքացնելու նպատակով պատրաստուած օրէնք մըն է:

»Ունեւորութեան Տուրք«-ի օրէնքը խորհրդարան ներկայացուելէ առաջ, վարչապետը Կ. Պոլսոյ թերթերու տէրերն ու խմբագրապետները Անգարա կը հրահրէ, օրէնքին մասին անոնց տեղեկութիւն կու տայ եւ կը պատուիրէ ի նպատ օրէնքին յօդուածներ գրել:

Կը կազմուին յանձնախումբեր, որոնք առանց անհատներու վճարելու կարողութիւնը ստուգելու, կը նշանակեն տուրքեր: Պատրաստուած ցանկերը կը յայտարարուին 18 Դեկտեմբեր 1942-ին: Ըստ այս օրէնքի 12-րդ յօդուածին, տուրքի վճարման պայմանաժամը 15 օր է, որով 4 Յունուանը 1943 թուականը կ'ըլլայ վճարման ժամկէտը: Անվճար քանակութիւններ ենթակալ են տոկոսի՝ առաջին շաբաթը 1 առ հարիւր, երկրորդ շաբաթը՝ 2 առ հարիւր: Տուրքի յայտարարուած թուականը եւ ժամկէտը մասնատակաւ տօնական օրե-

րու գուղադիպելուն) Գուրպան Պաշրամը(, 20 Յունուար թուականը կը յայտարարուի որպէս նոր ժամկէտ:

Բոլոր անոնք, որոնք իրենց տուրքը ճշգրտած ժամանակաշրջանին մէջ չեն վճարել կամ չեն կրնար վճարել, կառավարութիւնը անոնց բոլոր ստացուածքը աճուրդով կը ծախէ եւ եթէ անհատը տակաւին պարտական է, կը դրկուի պարտադիր աշխատանքի ճամբարներ:

Երբ անհատներու վիճակուած տուրքի քանակութիւնը, տուրքի գանձման գործադրութիւնը եւ անոր հետեւանքները նկատի առնուին, ի յայտ կու գայ թէ այս տուրքով հետապնդուած նպատակը առեւտրական հրապարակը եւ դրամագլուխը թրքացնել է: Հարստութիւնը ոչ-մասնատականներէն մասնատականներուն՝ թուրքերուն փոխանցել է:

Պարտադիր աշխատանքի դրկուելու համար Կ. Պոլսէն կը հաւաքուի 1869 անձեր, որոնցմէ 636-ը ճամբար մեկնելէ առաջ իրենց տուրքերը կը վճարեն: Աչքալէ՝ աշխատանքի ճամբար դրկուած անձերու բոլորն ալ ոչ-մասնատական են: ճամբար դրկուած 21 անձեր, քար կոտրելու, ճամբաներուն ձիւնը մաքրելու նման ծանր աշխատանքի ընթացքին կը մեռնին:

Թուրքիոյ տարածքին վրայ 114,368 անձ տուրքի կ'ենթարկուի, որոնց 62,575-ը Կ. Պոլսէն է: Այդ թիւին մօտաւորապէս 56,600-ը ոչ-մասնատական է: Թուրքիոյ տարածքին վրայ գանձուած ընդհանուր տուրքի քանակութիւնը 314,920.940 Թ.Լ. է, որուն 221,307.508-ը գանձուած է Կ. Պոլսեցիէն՝ մեծամասնութեամբ ոչ-մասնատականներէ:

9-13 Սեպտեմբեր 1943 թուականներուն New York Times թերթին մէջ Cyrus L. Sulzberger ստորագրութեամբ »Ունեւորութեան Տուրքը« քննադատող յօդուածաշարք մը կը հրատարակուի: Օրուայ արտաքին գործոց նախարար Նուման Մէնէմէնճիօղլու իր դժգոհութիւնը կը տեղեկացնէ ԱՄՆ-ի դեսպանութեան ու անոնց կը յայտնէ իր այն մտահոգութիւնը, թէ թուրք թերթերուն մէջ ալ կրնան հակամերիկեան գրութիւններ հրատարակուիլ: Ամերիկայէն կը վստահեցնեն, թէ յետ-

այսու, այդ թերթին մէջ, տուրքը քննադատող գրութիւններ պիտի չհրատարակուին:

15 Մարտ 1944 թուականին Ունեւորութեան Տուրքի գործադրութեան վերջ կը տրուի: Ծանր աշխատանքի ճամբարներու մէջ աշխատողներ ազատ կ'արձակուին: Զվճարուած տուրքեր ներուծի կ'արժանանան:

\* \* \*

Հայոց Ցեղասպանութեան Միացեալ Նահանգներու Քոնկրէսին կողմէ ճանաչումը յետաձգուեցաւ, ոչ թէ վարձկան լապպիստներու միջոցաւ թիւրքիոյ շուայթրէն ծախսած միլիոններուն, այլ՝ կառավարութեան վերջին պահուն կատարած սպառնալիքէն:

Թուրքիա սպառնաց Ամերիկացիներու իրաք ռազմանիւթ ու զօրք դրկած Ինճիլիք օդանաւային խարխիւր փակել եւ իրաք ներխուժել՝ ՓՓՔ-ական թաքստոցները քանդելու պատրուակով: Միացեալ Նահանգներ իր լաւ բարեկամ, ՆԱԹՕ-ի անդամ, ահա-

բեկչութեան դէմ իր գործակից թուրքիոյ այս սպառնալիքին առջեւ անգամ մը եւս տեղի տուաւ եւ ճշմարտութեան կողքին կանգնելու քաջութիւնը չկրցաւ ցոյց տալ:

Միացեալ Նահանգներ, 1943-ին ալ, թրքական թերթերու մէջ հակամերիկեան յօդուածներ հրատարակուելու սպառնալիքին առջեւ տեղի տուած եւ ամերիկեան թերթերու մէջ «Ունեւորութեան Տուրք»-ը քննադատող գրութիւններու վերջ տուած էր:

**Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի**

**Փասատիմայի մէջ՝**  
**Երեւնաբքի, Հինգշաբթի եւ Շաբաթ**  
**Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E**  
**Pasadena CA 91104**

**Կլէմտէյի մէջ՝**  
**Երկուշաբթի, Զորեւաբքի եւ Ուրբաթ**  
**Հասցէ՝ 450 North Brand Blvd. Suite 600**  
**Glendale CA 91203**  
**Հեռախօս (818) 434-8118**  
**միայն ժամադրութեամբ**  
**Առաւօտեան ժամը 10-էն, կ.ե. ժամը 3**



ՄՇԱԿՈՒՅԹ

ԹԱԻՋՈՒԹԱԿԱՐԱՐ  
ՎԱՇԷ ՐԱՅՐԻԿԵԱՆԻ ԱՐՈՒԵՍԱԸ

ԱՆԳԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ-ՄՈՒՐԱՏԵԱՆ

Գեղազիտական մեծ վայելքի երեկոյ մը հրամցուեցաւ գեղարուեստասէր հասարակութեան, որ խուռներամ եկած էր ունկնդրելու, հանրապետական, անդրկովկասեան մրցոյթներու դափնեկիր, շքանշաններու արժանացած շնորհալի թաւջութակահար Վաշէ Հայրիկեանի մենահամերգը, Կիրակի, Հոկտեմբեր 28ի երեկոյեան «German Methodist» եկեղեցւոյ մէջ:

Համերգը կազմակերպած էր «Լարք» երաժշտական ընկերակցութիւնը, նաեւ ազնիւ մտայղացումը ունեցած էր Հայրիկեանի 60-ամեակը նշել, ճոխ պատուաստեղանով մը:

Յայտագրին հնչեցին Պախի, Պէթովէնի, Տէպլիսի, Շոտաքովիչի եւ Շուստրի պահանջկոտ ստեղծագործութիւններէն:

Վաշէ Հայրիկեան դրսեւորեց հատուկ երաժշտի, նուրբ մեկնաբանի յատկանիշները, որոնք ունկնդրին միանգամայն համակեցին:

Ան դիւթեց աղեղի հպումով իր գործիքէն արտաբերելով ազնիւ, հիւթեղ հնչողութիւն, զգայուն եւ յստակ:

Կը նուազէ չափազանց հեղինակութեամբ, պարզ, գուսպ շարժումներով եւ անկեղծ: Ինչ ժանրի եւ ոճի ստեղծագործութիւն որ կատարեց, անոր մեկնաբանութեան մէջ կը զգացուէր բազմակողմանիօրէն գարգացած, բարձր ճաշակի եւ կրակոտ խառնուածքի տէր արուեստագետը:

Պախի թաւջութակի համար գրուած հինգերորդ շարանուագէն (suite) acappella կատարեց գեղարուեստական բարձր մակարդակով, ընկալելով Պախի ստեղծագործութեան խորունկութիւնը:

Պէթովէնի երրորդ Սոնատին մէջ, Հայրիկեան հարազատ ոճին, մեկնաբանեց փայլուն, ճկուն եւ ինքնավատահ: Յստակօրէն արտաբերեց Սոնատին խանդավառութիւնն ու կիրքը, Չերմութիւնն ու կայծը: Կրցաւ հաղորդել անոր ուժն ու քնարականութիւնը, նաեւ երրորդ մասի լարուածութիւնը խորիմաստ եւ թախծոտ, սրտածմլիկ եզրափակիչ բազմաձայնութեան վարպետութիւնը:

Տէպլիսի Սոնատը նուագուեցաւ հնչունային նուրբ, մերթ արտաուռ մերթ հեզնական երանգներով, աղեղի շարժման բազմազանութեամբ: Վերջին մասին գիշերերգի (Serenade) նուագը, Հայրիկեան վարպետօրէն լարերը ճնկճնկացնելով (Staccato) մերթ կամիթելով (pluck) կիթառի հնչիւններուն նմանցուց: Հետաքրքրական է, Շոտաքովիչի D minor սոնատը դժուարագոյն սոնատներէն հրաշալի, համարձակ (Bravaro) կատատ է: Աշխոյժ, հոգեկան վերիվայրումով, սուր ուրիշմով երկ է: Ազդեցիկ ու խիզախ, անցումներով եւ այլ վիրտուոզային դարձուածքներով լի երաժշտական ստեղծագործութիւն մը, որ թէքնիկայէն դժուար է: Կատարողներէն կը պահանջէ կատարել թէքնիք փայլուն վիրտուոզական հմտութիւն:

Երեք հիմնական յուզումնային նոյնիսկ ըմբոստ շարժերուն միջեւ հնարարտօրէն սեղաւորուած է «Largo»-ն իր հանդարտեցուցիչ խօսքը ըսելու: Անչափ զգայուն էր նուագը, կատարի կռիւէ վերջ աղօթք մըն էր կարծես: Ապշեցուց մեզ մնչերանգներու փոփոխութիւններու ճկունութիւնը սահուն անցումները հակադիր վիճակներու երաժշտութիւնը վարելու հմտութիւնը:

Հայրիկեան համոզիչ եւ ինք-



նայատուկ մեկնաբանեց Շուստրի հինգ ժողովրդական կտորները, իրար հակասող գոդորիկ պարզ ժողովրդական ոճով հաճելի էին: Սիրեցի յատկապէս առաջին երգի պարզութիւնն ու կրակոտութիւնը, ժողովրդական նուրբ հիմորը:

Պէթովէն եւ Շոտաքովիչի սոնատները դժուար երկեր են, կատարելով վիրտուոզ գոյգեր կը պահանջեն: Համերգի յաջողութեան մեծ նպաստը բերաւ դաշնակահարուհի ձուլիա Barsky-ն, որուն նուագակցութիւնը ամբողջովին անամայլային պահանջները կը գոհացնէր եւ յաճախ հրապուրիչ էին աշխուժութիւնն ու բազմատեսակ գունազարդումները: Իր դաշնակահարութեան հեղինակութիւնը, թէքնիքը վիրտուոզութիւնը անվիճելի է: Ան ցուցաբերեց շնորհալի նուագակցողի ունակութիւն, գրաւիչ ճարտարութիւն: Ամէն երկերուն մէջ ցուցաբերեցին երաժշտական զգայնութիւն:

Ներկաներու երկարատեւ ծափերուն ընդառաջելով նուագեցին Ալ. Յարութիւնեանի «Export»-ը ու դարձեալ գնահատանքի պրաւօններու, ծաղկեփունջերու արժանացան, յաղթահանողէսի վերածուելով համերգասրահ:

«Լարք»-ի փոխ տնօրէնուհի թագուհի Արզումանեան բեմ բարձրանալով շնորհաւորեց արուեստագէտները յաջող համերգին համար եւ ի մասնաւորի Վաշէ Հայրիկեանի ծննդեան 60 տարին, մաղթելով յաջողութիւն: Ապա բոլոր ներկաները հրաւիրեց շքեղ զարդարուած ճոխ հիւրասիրութեան:

Եթէ համերգը յաղթանակի երեկոյ էր, մեծարանքն ալ կարելի է ճոխութեան, շքեղութեան խորհրդանշան ստանանել: Առատ ու ճոխ էր ամէն ինչ...

Արհեստավարժ երաժիշտ կատարողներու հոյլ մը... Ամէնքը ուրախ եւ գոհ հաճոյացան:

Խօսք առաւ թագուհի Արզումանեան ներշնչուած բանաստեղծական ոճով դարձեալ դրուատեց Հայրիկեանի բարեմասնութիւնները, շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն իրենց հետաքրքրութեան համար: Հակիրճ խօսեցաւ Վաշէ Պարսումեանը, ապա մեծարեալ իր շնորհակալութիւնը յայտնեց «Լարք» երաժշտական ընկերակցութեան եւ անոր ղեկավար Վաշէ Պարսումեանին: Այս հիանալի առիթին համար: Ապա «Թաւջութակ» կարկանդակը կտրեց բոլորին բարի մաղթանքներու երգի ներքեւ: Բոլորը ուրախ եւ հպարտ էին:

«ՏԻԼԻՋԱՆ»Ի ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵԱՆ

Դժբախտաբար առիթը չեմ ունեցած կանոնաւոր կերպով հետեւիլ այս սենեկային նուագախումբի յայտագրերուն, նախ վայրի եւ ապա մեր գաղութի գիրար հրմշտկող յայտագրերու պատճառաւ:

Յարգանքի եւ գնահատանքի արտայայտութիւն մը թող նկատուի այս մէկը իմ կողմէ: Այս առիթով տեղին է գնահատել եւ անդրադառնալ «Լարք» երաժշտական ընկերակցութեան տաղանդաւոր եւ ժրջան ղեկավարին, Վաշէ Պարսումեանին, իր ազգային, մշակութային ծառայութեան համար, ինչպէս նաեւ «Լարք»-ի շուրջ հաւաքուած երաժշտասէր եւ նուիրեալ անձնաւորութեանց, որոնցմէ է մեր բարեկամ, Տօքթ. Նազարէթ Տարաքճեանը: Պէտք է նաեւ գնահատել Յովսէփի եւ Հիլտա Ֆիտանեանները, ինչպէս նաեւ Տէր եւ Տիկ. Հարմոն եւ Լուսինա Հրպրաները, որոնք կը հովանաւորէին նախորդ եւ այս համերգը: Ֆիտանեանները սոյն ժեսթը կը կատարէին ի յիշատակ իրենց անդրանիկ գաւակի, վաղամեռիկ Մկրտիչ-Մկրտչի անմոռաց յիշատակին:

\*\*\*

Կիրակի, Հոկտեմբեր 14, 2007 թուականին կէսօրէ ետք ժամը 3:00ին կը գտնուէինք «Colburn» դպրոցի «Zipper» ճանչցուած, Լոս Անճելոս քաղաքամէջի սրահէն ներս: Հաճելի է տեսնել որ քիչ մը ամէն կարգի եւ տարիքի անձեր գրեթէ լեցուցած են գեղեցիկ եւ համերգներու համար իտէալ յարմարութիւններ ունեցող սրահը: Նաեւ հաճելի է տեսնել որ հայերէ գատ, օտարներ ալ կան ներկաներու մէջ, փաստը տալով որ «Տիլիջան»-ի համերգները բաւականին լայն տարածում գտած են երաժշտասէր հասարակութեան մը կողմէ: Հարցումը Անգիլին կը հարցնէր թէ մեր գաղութի բազմաթիւ արուեստագէտները ինչո՞ւ չեն հետաքրքրուի նման համերգներով...

Կ'անցնիմ երրորդ շրջանի հա-

մերգաշարի երկրորդ համերգի քննարկման: Ուրեմն սոյն համերգաշարի գեղարուեստական ղեկավարն է Մովսէս Պօղոսեան, եւ գործադիր ղեկավարը՝ Վաշէ Պարսումեան:

Յայտագիրը ունի երեք անուններու գործերու կատարումը:

- Հայագրի Տիգրան Մանսուրեան:
  - Մորիս Ռափել եւ
  - Ֆելիքս Մենտլարն
- Տիգրան Մանսուրեան «Five Bagatelles» գործը, Մորիս Ռափելի ջութակի եւ թաւջութակի սոնատը, եւ Մենտլարնի հռչակաւոր եւ դժուարին գործը op. 49 Trio No. 1 D minor:

Անցնելով համերգի յայտագրի քննարկման, նախ կ'ուզեմ յայտնել որ ներկայ երաժշտասէր հասարակութիւնը ամենայն երկրկանօրեալ եւ ինքնամփոփ կերպով հետեւեցաւ իւրաքանչիւր կտորին եւ պէտք է ըսել որ երեք ներկայացուած կտորներն ալ լրիւ կը բաւարարէին տարբեր ճաշակներու ներկայացուցիչները:

Այսպէս, Տիգրան Մանսուրեանի երաժշտական արտադրութիւնը, հասկնալիօրէն, բոլոր ճաշակներու համար, կրնայ ընդունելի չըլլալ, եւ սակայն իւրաքանչիւր ոճ մը ունի որ նորարական է, արդի ժամանակներու ոգին եւ զգացողականութիւնը դրսեւորող: Մէկ խօսքով մատչելի է անոնց որոնք վարժ են դասական, մեղեդիաւոր ստեղծագործութեանց, որոնք, սուրեալ կտորի մը ունկնդրութեանէն ետք, իրենց ակննջներուն մէջ երկար ատեն կը մնայ կտորին հմայքը: Մանսուրեանի պարագային, տպաւորութիւնը անմիջական է, կարճատեւ, ցնցիչ եւ անցողակի: Ի վերջոյ ունի իր ուժը, երբեմն պարզ, գեղեցիկ, քնքոյչ, երբեմն լիրիքական, խորհրդաւոր, ապա ոստոստուն, ժողովրդային, երբեմն ալ կըռուժաւոր, կրկնողական: Այս բոլոր յատկանիշերը կարելի էր գտնել նուագուած «Fire Bagatelles»-ը:

Շարք էջ 19

**ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄՈՒԹԻՒՆ**  
**Վ Ի Ծ Ա Կ Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն**

**Ի նպաստ**  
**Նոր Հաճնոյ Մեծն Մուրատ դպրոցին**

Մեծ Պարգել՝ 2008 Lexus ES 350  
Ա. Պարգել՝ Երկու Երթ ու Դարձ Տոնս Հայաստան  
Բ. Պարգել՝ Laptop Համակարգիչ  
Գ. Պարգել՝ 42" Plasma TV

**Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ**  
**Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. ժամը 8:00ին**  
**Verdugo Hills Country Club**  
**400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202**

Նոր Հաճըն Քաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով

**Նուէր՝ \$100**  
**Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝**  
**(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029**



# ԻՐԱՆԱՇԱՅ ԱՆՈՒՆԵՐ ԹԵՒԱՆ ՔՈՉԱՐԵԱՆ

Ն.Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Իրանաճայ անուանի աշուղ Թեւան Քոչարեանը ծնունդ է 1926 թվին Բուրվալի շրջանի Ֆարաշբաղ գիւղում: Հայրը կոչուում էր Եղիա, իսկ մեծ պապը Մատուրը եղել է գիւղի եւ շրջանի երեւելի անձերից: Մատուր պապը իր ազնիւ, բարի եւ ձեռներեց ընթացքով միշտ օտտակար է եղել իրեն դիմողներին եւ նիւթական ծանր վիճակի մէջ գտնուողներին: Իր խօսքը արժեւորուում էր գիւղում: Ահա նման մի ընտանիքի յարկի տակ մանկութեան օրերից յատուկ սէր է ունեցել նուազը, երգը, երաժշտութիւնը: Քսան տարի զբաղուել է հողագործութեամբ: Թեւանը պատմում է. «Այդ տարիներին մեր գիւղն էին գալիս հայ աշուղներ: Մեր համագիւղացի չոնգուր նուագող Սայադը երբեմն գալիս էր մեր տուն, նուագելու եւ հեքիաթներ պատմելու: Ես նստում էի նրա մօտ եւ ամենայն սիրով եւ ուշադրութեամբ լսում էի նրան եւ հետաքրքրութեամբ նայում էի նրա լարերի վրայ շարժուող մասնիկներին: Այդ գիշերները ինձ համար ամենաուրախ եւ երջանիկ պահերն էին: Ոգեւորուած յաջորդ օրը գնում էի գետի եզրերը, կը գտնէի մասրենի, շուի պատրաստելով սկսում էի նուագել: Շատ փորձեցի որ կարողանամ չոնգուր պատրաստել, բայց չհաջողեցի: Տեսցիները պախարակում էին ինձ որ դաշտի աշխատանքները թողած նուիրուել եմ երգին ու նուագին»:

1946 թվին սկսուեց հայրե-



նադարձութիւնը: Մեր ընտանիքն էլ բոլորի հետ մեկնեցինք Թեւրան: Մի խումբ հայ գիւղացիներ ներգաղթեցին, բայց շատերը հնարաւորութիւն չունեցան: Ստիպուած վերադարձանք մեր գաւառը: Հաստատուեցինք Աղբուլաղ գիւղում որի պատասխանատուն էր Զոհրապ Մեսրոպեանը: Սակայն 1950 թվին վերջնականապէս թողեցինք եւ հաստատուեցինք Թեւրան, Մաջիդիէ (Զէյթուն) քաղաքամասում:

Թեւրանում Թեւանը առիթ է ունենում մօտիկից ծանօթանալ մի քանի երաժիշտների հետ, տեսնել նրանց նուագարանները թառ, քեւ՝մա՛նչա՛, դափ չոնգուր եւ այլն, եւ երբեմն նրանց հետ մասնակցում է ինձոյքներին, հանդէսներին եւ իր բնատուր քաղցր ձայնով ուրախացնում է բոլորին: Աշուղ Թեւան Քոչարեանը երբէք իր երաժշտա-

# ՄՍԱՅՈՒԱԾ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «ՇԱԲԱՍԻ ԿԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԸԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ» ԱԻԵՏԻՍ ՓԱՓԱՁԵԱՆ

Ներկայ հատորը կը կազմէ Աւետիս Փափագեանի լոյս ընծայած պատմագիտական գիրքերու շարքին 12րդ հրատարակութիւնը: Ան կը բաղկանայ 252 էջերէ: Մաքուր պտագրութիւն: Պատկերազարդ:

Ինչպէս իր նախորդ աշխատասիրութիւնները, փաստագրական նոր երկ մըն է այս գիրքը, որ նուիրուած է Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեակին: Այդ կապակցութեամբ դիտել տանք թէ Փափագեան օրին հրատարակած էր երկու յօդուածագրքեր:

ա. Մեծ Եղեռնի վերապրող վկայութիւնները:

բ. Օտար գործիչներու վկայութիւնները, որոնք (ա) եւ (բ) մասերը ամփոփուած են ներկայ գիրքին մէջ:

Հատորի սկզբնաւորութեան հեղինակը կու տայ «Հայերի Յեղապանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում» խորագրի տակ Սուլթան Համիտի Բունատիրութեան եւ Երիտթուրքերի եւ շրջաններուն հետապնդուած հայաջինջ քաղաքականութիւնը:

կան ելոյթներով չի փորձել դրամ վաստակել, այլ տարբեր աշխատանքներով իր եւ իր ընտանիքի պարուստն է հայթայթել: Երգի եւ երաժշտական արուեստի մէջ հմտանալու համար աշակերտել է յայտնի թառիստ Ախունդ Զադէին եւ Եփրեմ Դիլիշեանին եւ որոշ չափով



Հատորի երկրորդ մասը յատկացուած է Եղեռնի ընթացքին եւ անկէ ետք տարբեր ազգութիւններու պատմաբաններու, լրագրողներու պետական անձնաւորութիւններու եւ այլոց վկայութիւններուն ու գնահատութիւնները:

Արդարեւ, շահեկան գիրք մը:

վարժուել է թառի եւ չոնգուր նուագելու արուեստին: 1978 թվին աշուղ Թեւան Քոչարեանը հիմնած է իր գուսանական առաջին խումբը 15 հոգուց բաղկացած, եւ բազում անգամներ ելոյթներ է ունեցել

Շաբ.ք էջ 19



**Wahib's**  
MIDDLE EAST RESTAURANT  
الشرق مطعم  
MEDITERRANEAN LEBANESE FOOD



Wahib

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

**CATERING FOR ALL OCCASION**

FAMILY ENTERTAINMENT  
BANQUET HALL  
EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT  
INTERNATIONAL ~ ARABIC  
CALL FOR RESERVATION



MOUHAMAD SALEM  
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR



**BELLY~DANCING**

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.  
TEL 626-281-1006 626-587-1048  
FAX 626-281-3641



# ԴԱՂ ԷԼԱԻ ՄՐՏԻՍ

**Ռ. ԿՈՐԻԻՆ**

Երեկնապահ էր, երկինքը մի-  
ապաղաղ ամպով ծածկուած, ան-  
բեւեռ կաթիլներ կաթկթացին, ան-  
բեւեռնոցը պարզեցի անձրեւի դէմ՝  
այն մտքով, թէ հիմա է որ տեղա-  
տարափ անձրեւ կը սկսի, որի  
կարիքը խասորէն զգացուած էր,  
սակայն չեկաւ, այն էլ որ կար,  
կանգ առաւ, միայն օդի ջերմաս-  
տիճանը նուազեց, ոչ մըսելու չափ:  
Անձրեւանոցս հաւաքած Western  
փողոցից ուղղուեցի դէպի Գլէնդէ-  
լի Ջոնզին կից Starbucks սրճարա-  
նը, ուր տղաները, երիտասարդ ու  
տարեց, նարդի են խաղում, սրճում  
եւ գրուցում են լաւից ու վատից,  
դէպից ու դէնից, այդ միջոցին  
նկատեցի իմ երկու բարեկամներս  
իրար դիմաց նստած տաք-տաք  
զրոյցի են բռնուած, բարեւ ասելով  
եւ ձեռնուկով տեղ գրաւեցի իրենց  
կողքին լուռ հետեւելով խօսակցու-  
թեան.

-Ում ձեռքը բռնեցի, լաւու-  
թիւն արեցի, դրա փոխարէն ապե-  
րախոտութիւն տեսայ, էս ինչ աշ-  
խարհ է, մեզ ծանօթ մարդիկ  
փոխուեց, մոռացել են իրենց անց-  
եալն ու ով լինելը, սա էլ կեանք է,  
սա էլ երկիր է, որ ապրում ենք,  
ոչ խիղճ կայ, ոչ գթասրտութիւն:

Աշտոն էր, խօսում էր սրտուն-  
ջով , խօսում էր բարձրաձայն,  
մերթ ձեռքը երզջխմբի ղեկավա-  
րի պէս ջղաձգօրէն շարժելով,  
առանց նկատի առնելով շրջապա-  
տը եւ ուր գտնւելը: Նա գանգատ-  
ուած էր այստեղից ցաւեր սրտում  
կուտակուած հարագատից եւ ընկե-  
րոջից, բողոք նրանց վերաբեր-  
մունքի նկատմամբ:

Աշտոնը չափահաս տարիքով  
45-ի մօտերը, կլոր դէմքով՝ մոր-  
թու վրայ քիչ ծաղկաւար նշան-  
ներ, խոշոր սաթի գոյն եւ արագա-  
շարժ աչքերով, ճակատը կարճ՝  
գլխի խիտ մազերի պատճառով,  
ակօսանման կնճիռներ հորիզոնա-  
կան, սեւ-սպիտակին խփող խոզան  
մազերով, քիթը ներդաշնակ տի-  
րապետող դէմքին, ականջները չա-  
փը նորմալ սրուած դիրքում եւ  
միջակ հասակով:

Նկատելով որ խօսակցութեան  
սկզբից ներկայ չէի եղել, կտրած  
շերտի պէս մէջ ընկայ հարցնելով,  
թէ.

-Աշտոն ջան, բանը ինչո՞ւմն է,  
ինչո՞ւ ես ջղայնացած ու վրդով-  
ուած խօսում, ով է քո սրտին դադ  
տւել, ասա՛:

-Ինչ ասեմ աղբեր ջան, ցա-  
ւերս շատ են, որ մէկն ասեմ.

-Այ տղայ, այս տարիքում,  
կեանքը երկար դեռ քո առջեւն է,  
դու ինչ ցաւերի մասին ես խօսում,  
անգլերէն ասաց, take it easy արա  
եւ մոռացիր, եթէ ոչ բարոյցի եւ  
մաղձ կը դառնայ հոգուդ, ճահիճի  
հոտի պէս եւ քեզ կը նեղացնի,  
անցեալից կառչող մարդը խեղճ է  
եւ կորցնում է ներկան ու ապագան.

-Միթէ՞ կարելի է անտարբեր  
լինել, միթէ՞ կարելի է պատճառած  
խոցերը մոռանալ, նրանք գալիս  
են հարագատի եւ ընկերոջ կողմից.

-Այո՛, ես էլ մէկ ձայնի եմ  
Աշտոնի հետ, իմ գլխին էլ շատ  
խաղեր են խաղացել, շատ են նե-  
ղութիւն պատճառել, մարդ ուրիշի  
դիմաց լինի կարող է փոխարինել,  
սակայն հարագատիինը ի՞նչ անի.

Մեղձ էր թիչ էլ խզուած  
ձայնով էր խօսում Պօղոսը:

Այսօր Պօղոսը իմ աչքերին  
աշխոյժ եւ առողջ երեւաց, ամէն  
անգամ իրեն տեսնելիս հիւանդ եւ

անհանգիստ էր՝ ձայնն էլ աւելի  
նւազ, հիւանդի նման տնքացող:  
Պօղոսը ինձանից եւ Աշտոնից երկար  
հասակով, բասկեթբոլ խաղացողի  
հասակ: Թիկնեղ կազմուածքով,  
փորը ոտքերից առաջ վազող, վա-  
յելուչ դէմքով, գլխի մազերը ճեր-  
մակ դէպի աջ տապակուած, 70-ից  
թեքուած տարիքով:

-Ինչ է նշանակում վատու-  
թեան դիմաց վատութիւն անել քո  
հարագատի կամ ուրիշի նկատ-  
մամբ, դա խորացնում է ցաւը,  
թէ՜՜՜ ցացնում է կրակը, դա անխոչ-  
լատելի արարք է, պէտք է տեսնել  
պատճառն ինչ է եղել, ինչ թիրի-  
մացութիւնների հետեւանք են: Արե-  
ւը ձմռան մեզանից հեռանում է եւ  
կարօտում ենք նրա ջերմութեան,  
պէտք է գանգատուե՞նք, որ նա  
ինչո՞ւ է հեռացել, դա մեր հողազն-  
դի պտոյտի հետեւանքն է, ոչ թէ  
արեւը մեզանից խռովել է: Ասում  
են՝ Ալէքսանդր Մակեդոնացու գօ-  
րականերից մէկը գանգատի է գա-  
լիս մի ուրիշի դէմ, Ալէքսանդրը  
լսելու ժամանակ ձեռքով մէկ ական-  
ջը փակում է, իրեն հարց են տալիս,  
թէ՜՜՜ ինչո՞ւ ականջդ փակել ես, ի  
պատասխան ասում է՝՝միւս ականջս  
էլ նրան պիտի լսի ճշմարտութիւնը  
հասկանալու համար:

-Յակոբը շատ կրօնական զգա-  
ցումների ոճով է խօսում, ներո-  
ղամտաբար, առիթից օգտուող մար-  
դիկ կան՝ լինի դա հարագատ կամ  
ընկեր, բարոյականութիւնից զուրկ,  
որոնք դրամի հասնելով յարգանք  
ու պատիւ, ազգային եւ մարդկային  
արժէքները ոտնակոխ են անում,  
միայն ու միայն կեանքը ծառայեց-  
նում են հարստութիւն դիզելու  
իրենց փառքի համար, ցաւօք այ-  
սօրուայ աշխարհը փողի աշխարհ  
է, չունեցողի համար վայ է եկել,  
նրան մարդի տեղ չեն դնում,  
աչքաթող են անում.

-Չէ՛, Պօղոս, այդպէս էլ չի, որ  
դու ես ասում, դրամը չէ, որ  
չափանիշ է, մնայունը բարոյական  
արժանիքներն են: Դրանով հան-  
դերձ դրամը կարիք է: Դպրոցում  
շարագրութեան նիւթ էին տալիս,  
թէ՜՜՜ գիտութիւնն է լաւ, թէ՜՜՜ հարս-  
տութիւնը: Երկուսն էլ լաւ են:  
Կան մեծահարուստներ, որոնք թէ  
արժանաւոր մարդիկ են եւ թէ  
իրենց ունեցուածքով օգտակարու-  
թիւն են բերում համայնքին եւ  
հայրենիքին, էլ ճանապարհները,  
եկեղեցիները, դպրոցները եւ այլն,  
որոնք կառուցուում են, նորոգուում  
են, ո՞ւմ դրամով է, մեծ մասը մեր  
գործարար-մեծահարուստների մի-  
ջոցով են:

-Հակառակ չեմ, որ ազնիւ եւ  
նուիրեալ անձինք շատ կան թէ  
գիտնական, թէ մտաւորական եւ թէ  
մեծահարուստ, մէկն իր մտքի  
թռիչքներով, միւսն իր հարստու-  
թեամբ օգտակար են լինում թէ  
հայրենիքին եւ թէ ժողովրդին.

-Խօսքս նրանց մասին է, որ  
դրամը յարաբերութեանց միջոց  
են ծառայեցնում, նրանք վատատե-  
սութեան եւ խռովութեան սերմեր  
են ցանում, կեանքը պղտորում են,  
ասէկօսների եւ բամբասանքների  
դուռ են բացում.

-Այդպէս է անկասկած, շատ  
գանգատներ նրանք են անում, որ  
ժամանակին ի վիճակի են եղել եւ  
իրենց ունեցուածքը անխոհեմա-  
բար ձեռքից տուել են, կորցրել են  
իրենց արժէքը եւ եթէ մէկին էլ մի  
փուշ են տւել, մեծացնում են դա եւ  
հարագատութեան մէջ խնդիր են  
սարքում եւ անտեղի խռովութիւն  
առաջացնում:

# ՅՈՒՆԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՇԻՅ ԱՐՅՈՒՆԸ

Առաջին անգամ անունը տե-  
սայ կապոյտ կողքով կոկիկ տեա-  
րակին վրայ. «Սիւզի Պատիկեան,  
Անգլերէն շարագրութիւն, Լ. կարգ,  
Գալուստեան Ազգային վարժա-  
րան, 1953-1954 Ուսումնական տա-  
րի, Գահիրէ...»

Բացի տեսողակը, մաքուր գե-  
ղագիր գրածը՝ պարզ ու գեղեցիկ  
ուր տրամաբանութիւն, հիւմըր,  
հակիրճ եւ յստակ արտայայտու-  
թիւն կը կազմէին ամբողջ մը:

Գրեթէ միշտ, յաջողագոյն շա-  
րագրութիւն ի՞րն էր ու ես առիթն  
ունեցայ հետեւելու Սիւզիի գրած-  
ներուն, որոնց մէջ տիրապետող էր  
միտքի պայծառութիւնը: Ունէր  
նաեւ դիտելու շնորհ ու իր կեր-  
պարները լեցուն էին կեանքով:

Սիւզի այնքան կը սիրէր կեանք-  
ը...

Կը հաւատար թէ արեւոտ օրեր  
կը սպասեն իրեն ու կ'ըսէր տեղը  
մը, «Կ'ուզեմ նըրս ըլլալ, որպէսզի  
կարենամ պատիկներս լաւ մեծց-  
նել»:

Փափաք յայտնեցի ծանօթա-  
նալ անձամբ աղուոր շարագրու-  
թիւն գրող այս աղջկան: Իր դասըն-  
կերներով եկաւ մեր տունը շնոր-  
հաւորելու մեր ամուսնութիւնն ու  
նաեւ բերելու մեզի ձեռագործ իր  
նուէրը:

Դէմքիս ժպիտը, աշուկները,  
վարսը, կենսունակութիւնը, եռան-  
դոտ, հաստատեցին միտքիս մէջ  
կազմուած ու աղուորացած հայու-  
հին:

Քանի մը անգամ եւս ընդու-  
նեցինք Նոր Տարիի շնորհաւորա-  
կան սիրուն բարիքները:

-Ասում ես, անտեղի վէճեր են  
առաջացնում եւ փուչ բաների  
համար կեանքը ալեկոծում, հիմա  
Յակոբ լսի՛ր, Աշտոն իր գլխի  
եկածը պատմի քեզ համար. նոր  
կ'ըմբռնես նրա գանգատի տեղին  
կամ անտեղի լինելը.

-Լա՛ւ, լսե՛ք Աշտոն, բայց  
մէկ պայմանով որ չձուլայ եւ հան-  
դարտ խօսի.

-Իրանում որ կայի, եղբորս  
հետ շատ լաւ վիճակ ունէիք, կա-  
ղապարաշինութեան արհեստանո-  
ցում քանի հատ գործաւորներ էին  
աշխատում, լաւ, ունեւոր յաճա-  
խորդներ, որոնց պատուէրները ժա-  
մանակին պատրաստում եւ լաւ  
վարձատրութիւն էինք ստանում:  
Դրամը ջրի պէս գալիս էր եւ ով  
որեւէ կարիքով ինձ էր դիմում չէի  
խնայում, օգնում էի: Միայն օգնու-  
թիւններըս մէկն եմ ասում հէնց  
իմ հարագատ ջանադորը.

-Միթէ՞ չգիտես, որ մէկին  
օգնում ես չպիտի ոչ ոք իմանայ,  
Յիսուսի ասած խօսքն է սա՛՛ եթէ  
ձայն ձեռքը օգնութիւն է կատա-  
րում, թող աղջ չիմանայ. առածն  
ասում է՝ բարութիւնն արա՛՛ եւ  
ջուրը նետիր, մի օր Աստուած քեզ  
ետ կը տայ անապատում.

-Թող Յակոբ, Աշտոն իր պատ-  
մութիւնն անի.

-Այստեղ ոչ ոքի անուն չտուի,  
որ դու էլ կրօնական գիտելիք մեր  
երեսին տաս: Երեկոյ էր, տուն  
եկայ, տեսայ կինս անհանգիստ է,  
հետս չի խօսում, քիթ ու մոռութիւն  
կախել է.

-Ի՞նչ է պատահել Անօ, անտ-  
րամադիր ես.

-Ոչինչ.

-Ոչինչը շատ քիչ է, ընթրիք  
ի՞նչ ես պատրաստել.

-Շւարած վիճակով ինչպէս  
կարող էի ընթրիք պատրաստել, ոչ

վերջին անգամ զինք տեսայ  
տասնըվեցերորդ տարեդարձին, հա-  
գիւ թէ ութ ամիս առաջ: Իր  
մասնաւոր հրաւերին ընդառաջեր  
էինք:

Շէն ու գուարթ էր այդ գիշե-  
րը, կը պարէր, կը գուարձանար, կը  
կատակէր, կը ծիծաղէր իր տարի-  
կեցիներու հետ ու դարձեր՝ կեդրո-  
նը բոլորի համակրանքին: Սիւզիի  
այդ կենսունակութիւնը «գրաւա-  
կան» էր գալիք գարուններուն...:

Կը մեկնէինք ու Սիւզի կը  
պարէր տակաւին՝ թախանձաքին,  
«քիչ մը եւս մնացէք, միս կ'եր-  
թա՞ք, այսքան շո՞ւտ»:

Ատեն մը վերջ լուր առինք թէ  
հիւանդ է:

Անմիջապէս միտքիս առջեւ  
եկաւ անուշիկ դէմքով ուշիմ աղ-  
ջիկը, որ ունէր փայլուն, կապոյտ  
աշուկներ ու մետաքս ոսկի վարս:

Երբ յանկարծ, պատահաբար  
կարծէք, թերթին մէջ մահազգը:

Շճած իրարու երկուքս իրարու  
նայեցինք, իր ուսուցչուհին ու ես:

Ըմբռնեցինք այդ երեկոյ մեր  
եկեղեցիին գանգակատան տխուր  
եւ մահազոյժ դօղանջը: Անագորոյն  
մահը եկեր, խլեր էր այս ծաղիկն  
ալ, աշխարհի գեղեցիկ պարտեզն  
ու տարեր զարդարելու իր բուրաս-  
տան՝ դրախտը...:

\*\*\*

Սիւզին է այսօր ալ այն կեն-  
սուրախ շէն ու գուարթ աղուոր  
շարագրութիւններ գրող գեղեցիկ,  
ուշիմ աղջիկը որ վերջին տարե-  
դարձին գիշերը ըսեր էր, իր  
ուսուցչուհին «Միս», կերթա՞ք  
այսքան շո՞ւտ»:

եւ, ոչ երեխէքը հաց չենք կերել.

-Նորից եմ հարցնում, ի՞նչ է  
անցել-դարձել իմ բացակայութեան.

-Հիմա որ շատ ես ստիպում՝  
կասեմ: Կէսօրից յետոյ եղբայրս  
Սերոժն էր եկել մօտս, նա իր  
վիճակի, անփող լինելուց, անորոշ  
ապագայ կեանքից էր գանգատ-  
ուում, նոյնիսկ մօտս լացեց, սիրտս  
մրմռաց իր համար, նա ինձանից  
դրամ էր խնդրում, ասելով՝ -Անօ  
ջան 50 հազար թուամանի կարիք  
ունեմ, որ տամ դասկայ փլատիկի  
մասնավճար եւ գործ սկսեմ:

-Ի՞նչ արեցիր, տուել ե՞ս, թէ  
ոչ.

-Առանց քեզ խորհուրդ հարց-  
նելով ինչպէս տալի.

-Չէ որ մօտդ դրամ կար,  
դրանից տալիր կամ ուղարկէիր  
ինձ մօտ.

-Էլ խեղքս չկտրեց, էլ վիճա-  
կում ինձ կորցրել էի.

-Լա՛ւ, երեխէքին հաւաքիր  
զնանք մամոնցդ տուն, էնտեղ էլ  
միասին կ'ընթրենք:

-Հասանք այնտեղ, տեսանք  
մէր ու որդի, սեղանի շուրջը  
բոլորած խղճուկ փոռոցը առջեւ-  
նին, անմիջապէս հեռախօսով պատ-  
ուիրեցի՝ փիտոգա բերին, կուշտ ու  
կուռ կերանք, ապա դարձայ ջա-  
նաղբորս՝ Սերոժին, որը լուռ  
մտածկոտ դէմքով կուչ էր եկել  
աթոռի վրայ: Նա մօտ 24 տարեկան  
քանի ամիս էր գիւնձառայութիւնը  
կատարած պարապ ու սարապ չէր  
աշխատում, ուսման տեսակէտից էլ  
ոչ այնքան ընդունակ հագիւ 9-րդը  
աւարտած, երկու քոչը եւ ինքը  
միակ եղբայրը, քոչրերը ամուսնա-  
ցել էին, հայրն էլ հանգուցեալ,  
մայրն ու որդի միասին էին ապրում  
իրենց սեփական յարկաբաժնում:



**ԱՅԺՄԱԿԱԿ ԱՆԻԹԵՐ**

**Ի՞ՆՉ ԿՐ ՊԱԿՍԻ ՄԱՐԴՈՒՆ ԱՆՓՈՓՈՒՍԵԼԻՆ ՓՈՒՍԵԼԸ, ՍՐԲԱՊՂԾՈՒԹԻՒՆ Է**

**ՎԱՐԴԱՆ Ա.Ի. ՔՉՆՅ. ՏԻԻԼ ԿԵՐԵԱՆ**

Երբ մտածումս կը կեդրոնացնեմ աշխարհի մարդոց եւ դէպքերուն վրայ, հետագայ հարցումը կ'անձկոտէ ու կը ճնշէ սիրտս: Ի՞նչ բանն է, որ մարդիկ կ'ուզեն ունենալ եւ հուսնին:

Ի՞նչն է հիմնական պակասը մարդուն, որ անհանգիստ կ'ընէ հոգին զիշեր ու ցերեկ ու կը դառնացնէ օրուան ժամերը հնչուեցներով: Ամէն ճոխութիւն տուեր է երկիրը գերառատութեամբ: Բարիք, հարստութիւն անապառ: Բաներ որ անցեալի մէջ գոյութիւն չունէին հիմա կը յորդին վաճառատուններու մէջ:

Ուրեմն, ի՞նչու հարցերը կը բարդանան, կարիքները կը բազմապատկուին եւ պահանջները կը խստանան:

Ի՞նչու մարդկային ամենօրեայ կեանքէն չեն շոգիանար ցաւերը եւ հիւանդութեան ազդարարութիւններով կը համառօտեն մարդուն կեանքին տեսողութիւնը:

Դժբախտաբար, այն ինչ որ կրնայ արժէք ու իմաստ տալ կեանքին ու ամէն բանին եւ կարելի չէ ապրիլ, առանց անոր, կ'անտեսուի:

Ինչ որ այսօր կը բացակայի մարդոց կենցաղավարութենէն՝ հաւատքին սրբութիւնն է եւ ինչ որ կը խոցէ հոգին, երկիր բարոյական նեխութիւնն է:

Հասարակութեան մէջ, ալ չես տեսներ հինաւուրց սուրբերը եւ մարտիրոսները, հաւատքի ու հայրենիքի սիրոյն համար՝ պատմութեան ստուերներուն մէջ թաղուած՝ անանուն հերոսները եւ նահատակները:

Հայրենիքի հորիզոններէն հեռու, ոչ մէկ տեղ՝ չես տեսներ ճշմարիտ հայր, որ զիր ու գրականութիւն սիրէ, զԱստուած ու եկեղեցին պաշտէ, իր տոհմաշէն աւանդութիւնները բարացուցէ եւ իր հայրենասիրութիւնը ցուցաբերէ գոհողութեան հոգիով ու պայքարով:

Այն փառաբանութիւն քիչերը, որ կ'երեւան համազարկութիւն տարած քննարկումն՝ նօսրացած նմոյշներ են, որ կը փորձեն մեծ ու պզտիկ կազմակերպութիւններով, առկայծ պահել հայուն ճրագը, հայերէն թերթ ու գիրք կը կարդան, կիրակը

նօրեայ պաշտամունքներուն իրենց ներկայութիւնը կը շեշտեն, հոգիով մեծահարուստ հայեր են, որպէս հայ կ'ապրին եւ որպէս հայ կը մեռնին:

Ժամանակի արտառոց փոփոխութիւններուն չեն հետեւիր, կը պահեն իրենց հայու հոգին ու գիտակցութիւնը անարատ ու պայծառ:

Որակաւոր հայեր են, համբարանք ու սահմանաւոր, բայց միշտ պատրաստ ու յօժար հայութեան մէջ ազգօգուտ պարտականութիւններով արժեւորելու իրենց գոյութիւնը:

Ինչ որ կը պակսի մարդկային կեանքէն գիտարուեստի յառաջադիմութիւնը չէ, ոչ ալ տնտեսական ու հասարակական բարենորոգումները, ատոնք անշուշտ իմաստ մը ունին, երբ կը կատարուին քրիստոնէական հաւատքով ու հոգիով:

Այն ինչ որ կ'ուզէ Աստուած, որ մարդը տայ աշխարհին, ունի եւ չի տար, հոս է, որ պակսին բացակայութիւնը կը շեշտուի ու որուն հետեւանքով, աշխարհը բարոյապէս կը գահավիժի եւ կը բարբարոսանայ:

Բնածին սէրը, որ գոյութիւն ունի մարդուն սրտին մէջ, դեռ չէ գտած իր արտայայտութեան շիտակ ուղին, որ աճի ու ճառագայթէ բարեպաշտ հոգիներու մէջ:

Մարդը՝ կը փոքրանայ ամբողջ էութեամբ, երբ իր բարոյական տկարութիւններով կը ստրկանայ եւ կը կորսնցնէ իր կեանքին որակը: Կը մեծանայ ու կը վսեմանայ, երբ ետը՝ կ'իջնէ իր կերպարէն ու կը ծառայէ՝ Աստուծոյ փառքին:

Որքան զմայլելի նպատակներ կրնայ իրագործել մարդը իր հաւատքով, երբ իր ներշնչումը կ'առնէ ոչ թէ երկրի միջին հորիզոններէն, այլ՝ երկնային աստուածային ոլորտներէն:

Մի վախնար ու վարանիր, երբ կը տրուի քեզի երջանիկ պատեհութիւնը խօսելու Աստուծոյ եւ Քրիստոսի մասին:

Անոնք Հայր եւ Որդի՝ բազմաճառագայթ ՓԱՌՔԵՐՆ են յաւիտեաններու եւ նախալուստեաններու: Նկատի ունեցիր, որ շուրջը կը գտնուին աղօթանուէր հոգիներ եւ կ'ուզեն ճանչնալ անոնց աստուածութիւնը: Հերիք է, խօսքերդ

ըլլան անկեղծ եւ սրտիդ բարբախումները անխառն սիրոյ արտայայտութիւնը:

Երբ մաքուր հաւատքէն կը բխի բառ ու խօսք, ուրիշ ամէն բան կը դադրի նշանակութենէ:

Այսօր ժամանակները շատ ծանր կը ճնշեն կեանքին վրայ եւ աշխարհացունց տագնապները կը մտրակեն մարդկութիւնը աշխարհի չորս ծագերէն:

Քրիստոնեայ մարդուն համար ուրիշ էլք ու փրկութիւն չկայ, բայց եթէ՝ փոխել մեղքին ճամբան եւ վերադարձ մը կատարել դէպի բարոյական եւ հոգեկան տարածքները, որ Աստուծոյ գահակալութիւնը կ'իշխէ բազմաճառագայթ փառքով:

\* \* \*

Փոփոխութիւնը դարուս ամենէն յատկանշական ունակութիւններէն մէկն է, որ կը բարացուցուի նորապաշտ մարդուն կերպարին վրայ: Անհրաժեշտ է, որ մարդիկ ժամանակի ոգիին եւ ըմբռնումներուն համաձայն՝ որոշ փոփոխութիւններ կատարեն, նոյնը չմնան, որ յետադիմական կոչուին:

Բայց փոփոխութեան սիրոյն, եթէ ճշմարտութիւնը պիտի տուժէ, մարդը ներքուստ եւ արտաքուստ պիտի աշխատի, բնութիւնը պիտի խաթարուի, նկարագիրը պիտի կեղծուի, բարոյականը պիտի մրոտի, կեանքին որակը պիտի տժգունի, խիղճը պիտի աշխատուի, հաւատքը պիտի ստուերոտի, աւելի նախընտրելի է, ծերութեան բարեւ չտուած այս կեանքէն, քան թէ մնայ եւ շարունակէ նեխել աշխարհի բարոյականը:

Սիրելի ընթացող, դուն պարկեշտ եւ բարեպաշտ եղիր, եւ ապրէ Աստուծոյ լոյսին մէջ, եթէ կ'ուզես, որ բազմահարապոյց մօտան չկարենայ կալանաւորել հոգիդ:

Բարոյական պատշաճութիւնները թոյլ չեն տար, որ այդպիսի պոռոտ ցուցասիրութիւն մը դրսեւորես եւ հասարակաց զգացումէն ծաղրուիս:

Եթէ մարդոց հիացումը գրաւելու համար ինքնութիւնդ պիտի խաբես եւ սուտ մարդու կերպարով պիտի երեւիս ամէն շրջանակի մարդոց մէջ, մեղք գոյութեանդ, որ հայ ծնած ես:

Մօտան՝ մարդկայինը կ'առնէ քեզմէ եւ կու տայ անմարդկայինը,

բնականը կը փոխարինէ արուեստականով եւ հարագատը կեղծիքով:

Չեմ հասկնար, ի՞նչ շնորհք կայ այս աշխարհակ փոփոխութիւններուն մէջ, ուր արականը եւ իգականը կը շփոթուին եւ կարելի չէ կինը գատորոշել մարդէն:

Թող մէկը չհամարձակի արդարացնել իր ամօթալի արարքը, ըսելով, որ մարդոց մեծամասնութիւնը այդպէս կ'ընէ, ես ի՞նչու չընեմ, ի՞նչու փոքրամասնութեան օրինակին պիտի հետեւիմ եւ նշանակ պիտի ըլլամ ծաղր ու ծանակի:

Եթէ մէկը գողութիւն կ'ընէ, դուն ալ պիտի գողնաս, եթէ ուրիշը կը խաբէ ու կը շահի, անոր օրինակին պիտի հետեւիս, չե՞ս կարծեր, որ Աստուծոյ եւ մարդոց առջեւ բարոյական վարկը կը կորսնցնես:

Ոչ սիրելիս, ո՛չ, միայն սատանան այդպէս կը տրամաբանէ ու կը դատէ:

Դուն պարկեշտ եղիր եւ Աստուծոյ լոյսին մէջ մնացիր: Մի թողուր, որ մօտան հոգիիդ դարպասէն ներս սպրդի եւ փորձութեան մասնէ քեզ:

Բարեպաշտ քրիստոնեայ մը կարծրօրէն կը փորձուէր կեանքի դաժան դէպքերէն, մէկը միւսին ետեւէն դժբախտութիւնները կը հարուածէին զինքը:

Ամէն անգամ, որ նոր վիշտ մը կուգար պատուհասելու զինքը, կը դիմազրուէր զայն հետեւեալ խօսքերով՝

- Ով Աստուած, գարկ, որքան ծանր, որ կրնաս, արժանի եմ երկինքէն պատուհասուելուն:

Այս փորձութիւններուն տուկաց անորտունը մինչեւ իր կեանքին մօտալուտ վախճանը: Այն ժամուն, երբ աչքերը պիտի փակէր աշխարհի լոյսին, երիտասարդը սթափում մը ունեցաւ եւ ըսաւ իր հոգեւորականին:

- Երկնքէն ձայն մը լսեցի, որ կ'ըսէր, «Ոսկի պսակին մրճահարումը վերջացաւ, գոր քեզի համար պատրաստեցի»:

Մարդիկ՝ մինչեւ որ իրենց հոգին անապատի ովասիսի չվերածեն կեանքի մէջ ու փորձեն փախչիլ, խաղաղ ու ապահով տեղ պիտի չգտնեն, վախը եւ վիշտը ցմահ անբաժան պիտի ըլլայ իրենց կեանքէն:

**Հայ Թելեժամբը կը Վերադառնայ 18ը Ալիքի Վրայ**  
Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ այլ Օրուան 24 ժամբըը

**Շարաքը 7 օր անվճար**  
Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ

**Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել**  
Հայկական Թելեժամ (818) 982-2400

\*\*\*\*\*

**The Armenian Teletime Is Back On Channel 18**  
Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day  
**7 Days Per Week, Free**  
No Subscription Fee - Plus 40 Additional Channels

**For info call The Armenian Channel (818) 982-2400**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 for USA  
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----

Tel :----- Fax :-----



ՄԱՐՁԱԿԱՆ

ԵՒՐՕ - 2008

ՓՈՐԹՈՒԿԱԼ - ՀԱՅԱՍՏԱՆ 1-0

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը ընտրական փուլում կրեց իր 6-րդ պարտութիւնը՝ հիւրընկալուելիս 0:1 հաշուով պարտուելով Պորտուգալիայի հաւաքականին: Հայաստանը ընտրական Ա. խմբում 9 միաւորով շարունակում է ընթանալ 6-րդ հորիզոնականում՝ իրենից հետ թողնելով Ղազախստանի եւ Ատրպէյջանի հաւաքականներին:



Պորտուգալացի հետ մրցափէճում Հայաստանի հաւաքականը հանդէս եկաւ 4+5+1 մարտավարութեամբ: Դարպասին էր Ռոման Բերեզովսկին, պաշտպանութիւնում հանդէս էին գալիս Սարգիս Յովսէփեանը, Ռոբերտ Արզումանեանը, Կարէն Դոխոյեանը եւ Ալեքսանդր Թադեւոսեանը: Կիսապաշտպանութիւնում ընդգրկուել էին Լեւոն Պաշաջեանը, Արթուր Ոսկանեանը, Ռոմիկ Խաչատրեանը, Արարատ Առաքելեանը եւ Արտաւազ Քարամեանը: Յարձակման գծում հանդէս էր գալիս միայն Սամուէլ Մելքոնեանը: 2-րդ կէսում փոխարինման մտան Աղուան Մկրտչեանը, Համլէտ Մխիթարեանը եւ Էդգար Մանուչարեանը:

Հայաստանի հաւաքականը առաձնապէս ոչնչով աչքի չընկաւ եւ հիմնականում մտածում էր պաշտպանութեան մասին: Այնուամենայնիւ մեր ընտրանին կարող էր եւ չպարտուել: 35-րդ րոպէին անգլիացի մրցավար Մայք Ռայլին Պորտուգալիայի հաւաքականի դարպասին չնշանակեց բացայայտ 11 մեթրանոց: Այդ պահին հաշիւը 0:0 էր, եւ եթէ Ռայլին ճիշտ որոշում կայացնէր, ապա դժուար էր ասել, թէ հանդիպումը ինչ հաշուով կ'աւարտուէր:

ԹԵՆԻՍ

ԴԱԻԹ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 9-ՐԴՆ Է

Թենիսի միջազգային ֆեդերացիան Շանհայի «մասթերզ» դասի սուպերմրցաշարից յետոյ հրապարակել է ուժեղագոյն թենիսիստների դասակարգումը: Արժեն թինան ներկայացնող հայազգի Դաւիթ Նալբանդեանը 2007 թուականի արդիւնքներով զբաղեցնում է 9-րդ հորիզոնականը: Աղիւսակը գլխաւորում է շվեյցարացի Ռոժէ Ֆեդերերը:



Շանհայի սուպերմրցաշարը, որին մասնակցում էին աշխարհի ուժեղագոյն 8 թենիսիստները, անցած շաբաթավերջին աւարտուեց շվեյցարացի թենիսիստի յաղթանակով: Եզրափակիչում Ֆեդերերը ջանքեր էր ցուցաբերում սպանացի Դաւիթ Ֆեդերին:

Ուժեղագոյն թենիսիստների դասակարգման ցուցակում երկրորդը սպանացի Ռաֆայել Նադալն է, սերբ Նովակ Ջոկովիչը երրորդն է, իսկ ուսաստանցի Նիկոլայ Դավիդենկոն՝ չորրորդը: Լաւագոյն տասնեակում տեղ են զբաղեցրել նաեւ Դաւիթ Ֆեդերը, Էնդի Ռոդիքը (ԱՄՆ) Ֆերնանդո Գոնսալեսը (Չիլի), Ռիշար Գասկեն (Ֆրանսիա) եւ Թոմի Ռոբերդոն (Իսպանիա):

Ֆեդերերը մրցաշրջանի 2007-ում սահմանեց իւրօրինակ ռեկորդ. միայն թենիսի կորտում՝ տարբեր մրցաշարերի մասնակցելով, վաստակեց աւելի քան 10 միլիոն եւրո:

ՇԱԽՄԱՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՈՒԱՋՆՈՒԹԻՒՆ

Թուրքիայում մեկնարկեց տղաների եւ աղջիկների Շախմատի աշխարհի պատանեկան առաջնութիւնը, որի անդրամիկ տուրում բաւական յաջող են հանդէս եկել Հայաստանի ներկայացուցիչները:

Տղաների պայքարում յաղթանակներ են տօնել 10 տարեկան Տիգրան Յարութիւնեանը, 12-ամեայ Յովհաննէս Գաբուզեանը, Նորայր Թորոսեանը, 14-ամեայ Սամուէլ Տէր-Սահակեանը, Ռոբերտ Աղասարեանը, Վահէ Բաղդասարեանը, 16-ամեայ Ռոբերտ Յովհաննիսեանը, Դաւիթ Գէորգեանը, 18-ամեայ Աւետիք Գրիգորեանը, Հրանտ Մելքոնեանը, Յովիկ Հայրապետեանը:

Աղջիկների պայքարում յաջողութեան են հասել 10-ամեայ Մարիամ Մանուկեանը, 18-ամեայ Նունէ Դարբինեանը: Պարտութիւններ են կրել 10-ամեայ Մանուէլ Պետրոյեանը, Հրանտ Մեթլոնեանը, 16-ամեայ Արուսեակ Կարիսեանը: 12-ամեայ Սվետլանա Միրզաբեկեանը եւ 14-ամեայ Լուսինէ Թորոսեանը իրենց պարտիաները աւարտել է ոչ-ոքի:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԵՒՐՕ - 2008 ԶՏՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Ա. ԽՄԲԱԿ, Նոյեմբեր 17, Ֆինլանտա - Ազրպէյճան 2-1, Լեհաստան - Պելճիքա 2-0. Row 2: Փորթուկալ - Հայաստան 1-0.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Ա. Խմբակի դասաւորումը, Լեհաստան 13 8 3 2 22-10 27, Պելճիքա 13 4 3 6 13-16 15. Row 2: Փորթուկալ 13 7 5 1 24-10 26, Հայաստան 11 2 3 6 4-12 9. Row 3: Սերպիա 12 5 5 2 19-9 20, Ղազախստան 12 1 4 7 10-20 7. Row 4: Ֆինլանտա 13 6 5 2 13-7 23, Ազրպէյճան 11 1 2 8 6-27 5.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Բ. ԽՄԲԱԿ, Նոյեմբեր 17, Սկովտիա - Իտալիա 1-2, Լիբանիա - Ուքրաինա 2-0.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Բ. Խմբակի դասաւորումը, Իտալիա 11 8 2 1 19-8 26, Լիբանիա 11 4 1 6 9-13 13. Row 2: Ֆրանսա 11 8 1 2 23-3 25, Վրաստան 11 2 1 7 16-17 10. Row 3: Սկովտիա 12 8 0 4 21-12 24, Ֆարո Կղզիներ 11 0 0 11 3-40 0. Row 4: Ուքրաինա 11 5 1 5 15-13 16.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Գ. ԽՄԲԱԿ, Նոյեմբեր 17, Մոլտաւիա - Հունգարիա 3-0, Նորվեկիա - Թուրքիա 1-2. Row 2: Յունաստան - Մալթա 5-0.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Գ. Խմբակի դասաւորումը, Յունաստան 11 9 1 1 23-9 28, Մոլտաւիա 12 3 3 6 12-19 12. Row 2: Թուրքիա 11 6 3 2 24-11 21, Հունգարիա 11 4 0 7 10-20 12. Row 3: Նորվեկիա 11 6 2 3 23-10 20, Մալթա 10 1 2 7 9-22 5. Row 4: Պոսնիա 11 4 1 6 16-21 13.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Դ. ԽՄԲԱԿ, Նոյեմբեր 17, Գերմանիա - Կիպրոս 5-0, Չեխիա - Սլովաքիա 3-1. Row 2: Կալէս - Իրլանտա 2-2.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Դ. Խմբակի դասաւորումը, Չեխիա 11 8 2 1 25-5 26, Կիպրոս 11 4 2 5 17-22 14. Row 2: Գերմանիա 11 8 2 1 35-7 26, Սլովաքիա 11 4 1 6 28-23 13. Row 3: Իրլանտա 12 4 5 3 17-14 17, Սան Մարինո 11 0 0 11 2-52 0. Row 4: Կալէս 11 4 2 5 18-19 14.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Ե. ԽՄԲԱԿ, Նոյեմբեր 17, Անտորրա - Էսթոնիա 0-2, Մաքետոնիա - Խրովադիա 2-0. Row 2: Իսրայէլ - Ռուսաստան 2-1.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Ե. Խմբակի դասաւորումը, Խրովադիա 11 8 2 1 25-6 26, Մաքետոնիա 11 4 2 5 12-11 14. Row 2: Անգլիա 11 7 2 2 22-4 23, Էսթոնիա 12 2 1 9 5-21 7. Row 3: Ռուսաստան 11 6 3 2 17-7 21, Անտորրա 11 0 0 11 2-41 0. Row 4: Իսրայէլ 11 6 2 3 19-12 20.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Զ. ԽՄԲԱԿ, Նոյեմբեր 17, Հիւս. Իրլանտա - Տանիմարք 2-1, Լաթվիա - Լիխտենշթայն 4-1. Row 2: Սպանիա - Շուէտ 3-0.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Զ. Խմբակի դասաւորումը, Սպանիա 11 8 1 2 22-8 25, Լաթվիա 11 4 0 7 14-13 12. Row 2: Շուէտ 11 7 2 2 21-8 23, Իսլանտա 11 2 2 7 10-24 8. Row 3: Հիւս. Իրլանտա 11 6 2 3 17-13 20, Լիխտենշթայն 11 2 1 9 9-32 7. Row 4: Տանիմարք 11 5 2 4 18-11 17.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Է. ԽՄԲԱԿ, Նոյեմբեր 17, Ալպանիա - Պելլոնուսիա 2-4, Պուլկարիա - Ռումանիա 1-0. Row 2: Հոլանտա - Լիքսամպուրկ 1-0.

Table with 4 columns: Group, Match, Score, Result. Row 1: Է. Խմբակի դասաւորումը, Ռումանիա 11 8 2 1 20-6 26, Սլովակիա 11 3 2 6 9-14 11. Row 2: Հոլանտա 11 8 2 1 14-3 26, Պելլոնուսիա 11 3 1 7 15-22 10. Row 3: Պուլկարիա 11 6 4 1 16-7 22, Լիքսամպուրկ 12 1 0 11 2-23 3. Row 4: Ալպանիա 11 2 5 4 11-12 11.

«ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ»
ՇԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆԵ, ԼԱ ԶՐԵՍԵՆԹԱ)
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
Ժամը 10:00-ից 12:00
Կլէնտէյլի 26-րդ կայանից



# ՏՈՒՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ «ՄԵՐՏԻՆԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Շաբաթ 16-էն

եան» վարժարանը 1982-ին ի վեր կը ծառայէ քաղաքային համայնքին, ջամբելով ոչ միայն ուսումնական բարձր մակարդակի գիտելիքներ, այլ նաեւ հայեցի դաստիարակութիւն եւ քրիստոնէական կրթութիւն: Աստուածավախ միջավայրի մէջ ջամբուած ազգային ու կրօնա-

կան ամուր հիմքերու վրայ խարսխուած դաստիարակութիւնը մեր նորահաս սերունդին մէջ կը կերտէ առողջ նկարագիր ու հօր ինքնութիւն: Վարժարանը վարկաւորուած է Դպրոցներու եւ Համալսարաններու արեւմտեան ընկերակցութեան կողմէ (WASC): Վարժարանի մասին յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել (818) 907-8149:

## ԹԵՒԱՆ ԲՈՂԱՐԵԱՆ

Շաբաթ 15-էն

Մաջիդիէի, Նարմաքի եւ այլ քաղաքամասերի հայկական սրահներում եւ մշակութային միութիւնների կեդրոններում:

Թեւեւ Քոչարեանը անդամ է «Նայիրի» մշակութային միութեան երէցների բաժանմունքի: Միութիւնը յաճախ կազմակերպում է գեղարուեստական ձեռնարկներ, որոնց սիրով մասնակցում է հանրածանօթ աշուղը: Նշելի է որ նա իր բոլոր ելույթներից ստացած

հասույթը նուիրում է «Նայիրի», «Անահիտ», «Սիփան» միութիւններին, այդ համարելու որպէս ազգային սրբազան մի պարտականութիւն: Ամէն տեսակ գնահատանքի արժանի են մեր աշուղները եւ գուսանները, որոնք մեր աւանդական գործիքների ընկերակցութեամբ մեր տոհմիկ երգերն են տարածում, մասնաւորաբար նոր սերնդի մէջ: Իրանահայ աշուղական պատմութեան մէջ իր արժանի տեղն ունի անուանի գուսան Թեւեան Քոչարեանը:

## «ՏԻԼԻՋԱՆ»Ի ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐԸ

Շաբաթ 14-էն

telles» գործին մէջ, որ կարճ ըլլալով հանդերձ, ունէր ժամանակակից խորք եւ զգացումներու հարստութիւն: Ամէն պարագայի, հանձարեղ հայ երաժիշտը, թէեւ անմատչելի շատերուն, ներկայիս կը նկատուի հայ ժողովուրդի ապրող մեծագոյն երաժիշտը: Մեծապէս գնահատելի է որ «Լարք» բազմաթիւ առիթներով երաժշտասէր հասարակութեան կը հրամայէ Մանսուրեանի տաղանդին արգասիքները: Զուլթակահար Մովսէս Պողոսեան, թաւջուլթակահար Անթոնիո Լիսի եւ դաշնակահար Կալին Մարթին, մեծ ձեռնհասութեամբ կատարեցին Մանսուրեանի այս գործը, արժանանալով խանդավառ ծափահարութեանց:

գիքական ճկունութեան կ'ընկերանար երաժշտական, քնարական հնարքները:

\*\*\*

Ֆելիքս Մենտըլսոնի կտորը պիտի նուագուէր ընդմիջումէն ետք: Նուագողներն էին այս անգամ, ջութակի վրայ, հրաշալի կատարող Վարդի Մանուէլեան, տաղանդաւոր թաւջուլթակահար Անթոնիո Լիսի եւ յատկապէս հիանալի դաշնակահար Կալին Մարթին, որ թէ Մանսուրեանի եւ թէ Մենտըլսոնի այս կտորներուն կատարման մէջ յայտնաբերեց իր մեծ արուեստագէտ նուագողի յատկանիշերը: Կարելի է ըսել որ «առաջիններուն մէջ, առաջինն էր», այնքան որ տպաւորէ էր իր կատարողական արուեստը, դէմքի արտայայտութիւններէն մինչեւ իր ֆիզիքական շարժումները:

Կտորը ինքը Մենտըլսոնեան գլուխ գործոց մըն էր որ չորս բաժիններով, արագ, դանդաղ, շատ արագ եւ մանաւանդ չորրորդ շարժումը, որուն կցուած էր մեզի ծանօթ «appassionata», յուզմունքային բաժին մը: Այս կտորը եւս մատուցուեցաւ մեծ վարպետութեամբ, արժանանալով ներկաներու մեծ եւ խանդավառ գնահատանքին:

Արդարեւ, երաժշտական ունկնդրութեան բացառիկ վայելք մըն էր «Տիլիջան» երրորդ տարուայ երկրորդ յայտագիրը, որուն համար անկեղծ շնորհակալութիւն եւ արժանի գնահատանք:

Կը սպասենք յաջորդին:

## ԴԱՂ ԷԼԱԻ ՄՐՏԻՍ

Շաբաթ 16-էն

Տեսնելով Սերոժը չի խօսում, համաբար գուշակելով իր քրոջ հետ ունեցած հանդիպման եղելութիւնից տեղեակ եմ, ամաչութիւնից լուռ էր մնացել, դիմեցի իրեն:

Շատ լուռ ես նստել, իմացայք գալուդ մասին, դասկա փլատիկի համար ես կը դասաւորեմ, դու վաղը կը գնաս Հրայրի մօտ էս չէքն էլ կը տաս իրեն, ես կը հեռախօսեմ եւ ամէն ինչ կը կարգադրեմ, մի մտածիր, դրամի համար էլ հոգ մի անի, երբ ունեցար վերադարձրու: Դու օտարական չես, մեր եղբայրն ես, նկատելով որ ինքը ես ցանկութիւն յայտնել, նշանակում է, կամք ու ձգտում կայք մէջ աշխատելու եւ յառաջադիմելու, ես կանգնած եմ քո թիկունքին, գնա՛ առաջ:

էս ինչ հոյակապ մտածելակերպ, ինչ աջակցութեան անկեղծ մօտեցում առանց ակնկալիքի, ահաւասիկ օգտակար լինելու գեղեցիկ օրինակ, «Բարձրացրո՛ւ, բարձրացիր՛» նշանաբանի ոգին արտայայտող հոգեբանութիւն: Այս տեսակ վերաբերմունքը հրեաների մօտ հիմնաւոր սովորութիւն է նիւթապէս իրար օգտակար լինելու, իրար ձեռք բռնելու, բարձրացնելու նկատուածով: Երանի թէ այս հոգեբանութիւնն եւս մեր ժողովրդի մէջ տարբեր բնագաւառներում տիրակալ լինէր:

Սերոժը հետեւողական յամառ աշխատանքով օրըստօրէ առաջ էր գնում օգտուելով իսլամական վարչակարգի միջին խաւին ընձեռած օգնութիւններով՝ բանկային վարկերի եւ հումքի յատկացումներով: Ես ուրախանում էի նրա յաջողութիւններով, երբեմն խորհրդակցական տեսակետից դիմում էր ինձ առանց ինչպէս իմ մտային օժանդակութիւնը: Բայց այն էլ ասեմ, որ աղբիւրը պէտք է ինքնաբերաբար ջուր ունենայ ընդերքում, լցնելով աղբիւր չի դառնայ, Սերոժի էութեան մէջ նկատուում էր աշխատանքի սէրը եւ յառաջադիմելու բուռն փափաքը զգուշաւոր ծրագրութեամբ եւ նախատեսումներով: Նա լաւապէս ըմբռնում էր շուկայի բազկերակը եւ շահաւէտ գործարքների էր ձեռնարկում, այնպէս որ հետզհետէ գործը ընդարձակում եւ գործաւորների թիւը տասից հասնում երեսուցի մինչեւ յիսուցի: Սերոժի կեանքի մէջ սիրոյ ծաղիկ բուսնեց, նա ընկերական հանդիպումների ընթացքում ծանօթանում է Արսինէ անուանով գեղեցիկ աղջկայ հետ: Ուրախութիւնը-ուրախութեան է յաջորդում, ինքնախօսութիւն, նշանդրէք եւ հարսանիքի շքեղ հանդիսութիւն: Ծնւում է անդրանիկ մանչ գաւազը եւ կեանքը շարունակուում է:

Իրանի իսլամական կրօնական օրէնքներով դեկավարուելու սահմանադրութիւնը գրգռութեան պատրուակ ծառայեց արտադաժութելու: Գաղտնի կազմակերպութիւններ աշխատանքի լծեցին իրենց միջնորդների միջոցով հայ գաղութը քայքայելու նպատակաւ:

Ազատ եւ անկաշկանդ ապրելու եւ երեխաներիս համար լաւ ապագայ ստեղծելու յոյսերով տարիների շահած ու պահած գործը եւ ունեցուածքը ջրի հոսանքին տւինք: Միջնորդի միջոցով վիզա ապահովեցի Սպանիայի համար: Դրամիս մէկ մասը ծախսուեց Սպանիայում

մէկ տարի կեցութեան ժամանակ մինչեւ յաջողուեց ԱՄՆ գալու: Մեր ԱՄՆ հասնելը եւ տեղաւորուելը այնքան չարջարանքով չեղաւ, ինչ որ շատերինը, որոնք Թուրքիայից տառապանքներով գաղտնի սահմաններ էին կտրուած քայլելով մինչեւ հասնում էին Աւստրիա, այնտեղից էլ դէպի ԱՄՆ:

ԱՄՆ գալով օրերը ծանր էին անցնում, մեր Իրանը թողած, ունեցուածքը անխոհեմաբար ձեռքից տուած, գտնուում էինք անծանօթ մի երկրում, փոշման մեր արածի համար, սակայն ընկել էինք հոսանքի մէջ պէտք էր գնայինք առաջ, վերադարձը իմաստ չուներ, ինչպէս ինքնաշարժով մտնում ես ազատ երթուղու մէջ, ստիպուած ես համազօր քշելու, եթէ ոչ կը տան քեզ կը ջարդեն: Կամաց-կամաց պայմաններին համակերպուում էինք եւ մեր կեանքը հարթ խճուղիով գնալ սկսեց:

Թեհրանից լուր ստացանք որ ջանադօրս ընտանիքում անհանգստութիւն է առաջացել, կինը գժտուել է սկեսրոջ հետ, ուզում են ուղարկել մեր մօտ: Սիրով ընդունում եւ պահում ենք, սակայն ազգականներից կտրուած լինելով նա մենակութիւնից պահանջում է վերադառնալ: Մեր ջանադրերն ու կինը մեզանից խոտովում են մօր ետ ուղարկելու վրայ, որը մեր կամքով չեղաւ:

Մեծ դժբախտութիւն. մեր կեանքը ալեկոծեց, 20 տարեկան տղաս քաղցկեղով վարակուեց, ունեցած գումարներս նրա բուժման ճամբին ծախսուեց, իմ ազից տղան չբուժուեց եւ մահացաւ անփոխարինելի ցաւ ու կսկիծ պատճառելով մեզ: Մէկ տարի անցաւ, դեռ մենք մեզ չէինք վերագտել, էդ ժամանակ էլ ջանադրերս իր ընտանիքով եկաւ ԱՄՆ, մեծ գումար էր բերել:

Քրոջս տղայի հարսանիքն էր, կարեւոր անելիքների համար դրամի կարիքն ունէինք: Հարագատ գագայինք դիմել ջանադօրս, կնոջս հետ գնացինք Սերոժեանց տուն, մի հազար դոլար պարտք խնդրեցի, նա կնոջ ծուռ ակնարկի ներքոյ առարկեց, թէ՛ չունի, բայց ինչ ասի լաւ է՝ գիշերներն էլ գնայ աշխատի, որ սրանից նրանից դրամ չառնես: Անսպասելի վերաբերմունքից քար կտրեցի, կարծես դոլարով սառը ջուր լցնեն վրաս, մեր մնալը անօգուտ էր, միայն մի բառ ասելով հեռացանք:

Չէնց էսպէ՞ս, նամա՛րդ:

Սիրտս արիւն էր լացում, այդ խօսքը դաղ էլաւ սրտիս, հոգիս փոթորկուեց, մեծ վերաւորանք էի զգում իմ կատարած լաւութիւնների դիմաց, ուղղակի ապերախտ-փոքրհոգութիւն:

Չեմ կարծում Սերոժը մերժէր եւ հոգեպէս անհամաձայն գտնուէր, սակայն կնոջ ակնարկը նրան զգուշացրեց, հետեւաբար՝ նեղ դրութիւնից դուրս գալու եւ իրեն արդարացնելու համար յօրինեց աշխատանքի կարեւորութիւնն ուրիշից կախեալ չլինելու համար:

Չէ՛, սխալ մեկնաբանութիւն ես կատարում Յակոբ, Սերոժը պէտք էր որ Աշոտի ձեռքը բռնէր եւ նրան հովանի լինէր, պէտք էր կնոջ ուշադրութիւն չդարձնէր եւ չիշէր իր պարտական լինելը, արդէն տեղեակ էր, թէ ինչ դժբախտութիւն է պատահել նրա ընտանիքին, միթէ՞ չէս իմանում, որ կարեկցանքը երկուստեք պիտի լինի, որպէսզի կեանքս անոյշ իր ընթացքն ունենայ:

**ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ**  
Գաղութիս ծանօթ ազգայիններէն՝ ՃՈՐՃ ՏՈՒՆԱՅԵԱՆՅ սրտի կաթուածի հետեւանքով հիւանդանոց մնալէ ետք, այժմ տուն փոխադրուած է կազդուրման համար:  
Շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթենք իրեն:  
«Մասիս»

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Email: massis2@earthlink.net



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ  
Proud Past



Լուսաշող Ապագայ  
Exciting Future

AGBU HYE GEEN

*Presents*

MIREILLE KALFAYAN'S BOOK  
"AS A WOMAN SAW IT"

Collection of Articles

Presenters:

PROF. OSHEEN KESHISHIAN and MS. CECILE KESHISHIAN

SATURDAY, DECEMBER 15, 2007 - 11:00 AM

AGBU ALEX MANOOGIAN CENTER

2495 East Mountain Street, Pasadena, CA 91104

RSVP: agbuhyegeen@gmail.com or by calling (626) 794-7942

AGBU PASADENA CHAPTER

*Presents*

New  
Year's  
eve gala

Monday, Dec. 31, 2007

Pasadena Center

8:00pm

Dinner catered by "La Fogata"

DJ entertainment by "Heartbeat"

Please RSVP

(626) 794-7942

AGBU Center Pasadena • 2495 E. Mountain St. Pasadena

**ADULTS  
CELEBRATION**  
GYMNASIUM SEATING  
DONATION \$100

**TEEN'S  
CELEBRATION**  
IN "BOYAJIAN HALL"  
DONATION \$65

**KIDS 12 & UNDER  
CELEBRATION**  
IN "BIG TENT"  
DONATION \$30